**“O Christ, who is the true light,  
make my soul worthy to behold the light  
of your glory with joy,  
in that day when you call me;  
and also to rest in the hope of good men,  
in the mansion of the Just,  
until the great day of your coming.”**

(St. Nersess the Graceful)

In the prayer of St. Nersess the Graceful we are once again reminded of the Second Coming of Christ our Lord. Christ Himself has also conveyed to us the message of His

Second Coming. Both the Incarnation and the Second Coming of Christ our Lord can be grasped through the grace of faith.

We cannot perceive the Incarnation and the Second Coming of Christ our Lord through logic or through a scientific approach. The Incarnation has transformed the life of humanity. The same also applies to the Second Coming. With vision and deep faith, we as Christians await the Second Coming of Christ. This faith also helps us to live a life pleasing to God with the understanding that as baptized sons and daughters of our Lord we have the grace and the gift to arm ourselves with the presence of Christ.

The Orthodox Church has never attempted to set a specific time for the Second Coming of Christ our Lord because in doing so we would commit a great injustice to the teaching of Christianity. Christ is beyond the scope of time and space. Christ our Lord is an eternal being in the hearts of humanity. Therefore the Second Coming of Christ is an imminent reality in our lives, which could be felt and lived through prayer and fasting.

**Monday, 4/3/2006**

**“Fountain of immortality,  
cause the tears of repentance  
to flow from my heart,  
as from Mary Magdalene,  
that I may wash away the sins of my soul,  
before I depart this world.  
Have mercy on your creatures  
and especially on me, a great sinner”.**

(St. Nersess the Graceful)

In all the prayers of St. Nersess the Graceful we see the image of humanity, the image of the human soul. In

one word, we see the image of the world wherein the human being, exhausted of a sinful life, pleads to God, *“cause the tears of repentance to flow from my heart.”*

What actually happens as we open our hearts to confess to God? We simply surrender our lives into the hands of God and make the commitment to lead a life pleasing to Him and humanity. However this commitment ought to be reflected in our human relationships.

**Tuesday, 4/4/2006**

**“Grantor of mercy, grant me to  
come to you in orthodox faith,  
through good works and the  
communion of your Holy Body and Blood.  
Have mercy on your creatures  
and especially on me, a great sinner”.**

(St. Nersess the Graceful)

God is the source of all that is good, and we address all our prayers to Him. However our relationship with God as St. Nersess conveys to us is conditioned with a certain preparation. Through the period of preparation, we are able to weigh our faith as it is reflected in our daily lives, specifically in our words and deeds. Only then are we permitted to approach God and plead to him for his mercy.

We are all aware that even great theologians and church fathers have often encountered hurdles in their spiritual lives.

Prayer in the beginning is simply a recitation of words.

Prayer as we progress becomes the logic of our mind.

Prayer eventually becomes the movement of our heart.

It is at this moment that we feel and live the presence of God as the source of a new life.

Wednesday, 4/5/2006

**“Bounteous Lord, commit me to a good Angel,  
who may deliver up my soul in peace,  
and convey it undisturbed through  
the malice of wicked spirits to heavenly places.  
Have mercy on your creatures  
and especially on me, a great sinner”.**

(St. Nersess the Graceful)

The prayers in “I Confess with Faith” of St. Nersess the Graceful seem to be the steps of a stairway leading us to God. The more we read them, the closer we are to God. The more we make them the prayer of our hearts, the more we are encountered with the presence of God. As we speak about meeting God, the reality is that God is permanently present within our spirituality. It is those who have lost God or have been weakened in their faith who are not able to see God.

Therefore, each prayer is a small journey in search of God, which opens the eyes of our heart to see God and make the promise to walk with God.

Thursday, 4/6/2006

**“O Christ, who is the true light,  
make my soul worthy to behold the light  
of your glory with joy,  
in that day when you call me;  
and also to rest in the hope of good men,  
in the mansion of the Just,  
until the great day of your coming.  
Have mercy on your creatures  
and especially on me, a great sinner”.**

(St. Nersess the Graceful)

Christ is the true light. We all have experienced the very first moment as we open our eyes to witness the beauty of light and the beauty of the world given for our enjoyment. The source of light is God alone. Today humanity is cynical of this truth. The world of science has established a new method to interpret the Creation of the world. As Christians we see God to be the sole reason of all beauty. The message of St. Nersess the Graceful is clear, that with the power of our Christian faith we will be able to connect to God and be nourished by His Divine presence.

Friday, 4/7/2006

**“O Rightful judge, when you come with the glory  
of the Father to judge the living and the dead,  
do not sit in the judgment of me, your servant;  
but save me from the eternal fire,  
and make me also hear your blessed voice  
when you call your righteous ones  
to enter into your heavenly kingdom.  
Have mercy on your creatures  
and especially on me, a great sinner”.**

(St. Nersess the Graceful)

The Last Judgment is for us all. The just will enjoy the rewards, and the unjust and evildoers will be punished. This prayer of St. Nersess the Graceful tells us clearly that we are all accountable for the life we lead. We all remember the image of the Unjust Judge in Christ’s Parable. Inasmuch as he was condemned, he was called upon to change the course of his life.

Blessed are those who are able to change the course of their lives and accept God as the Way of Life.

**Saturday, 4/8/2006**

The presence of God the Almighty is reflected in the beauty of the Creation.

The presence of God the Almighty is reflected in the life of the people, but above all,

The presence of God the Almighty is reflected in the Incarnation of the Son of God.

As we pray, we focus on three thoughts. First, in the beauty of the Creation we see the harmony of the existential being, and the perfection of the world, the handiwork of God. In the Creation we see the glory of God and we meet God.

Second, in our lives we see that man created by God has the image of God, and is given all the gifts of the Creation for enjoyment. Truly God speaks to us through the hearts of the people, especially those who live a God-pleasing life.

Finally and most important, when we speak of Christ our Lord, in Him we see the immensity of his Divine love for the salvation of human souls.

**Palm Sunday, 4/9/2006**

Palm Sunday is the doorway to Holy Week. In the life of the Christian church Holy Week is the most inspirational and soul-enriching journey which leads us to God.

The victorious entry of our Lord and Savior Jesus Christ into the Holy city of Jerusalem reawakens in our spirituality a new Palm Sunday when Christ our Lord enters the depths of our souls. We embrace Christ our Lord and with His we also cherish the Divine strength rooted in our spirit.

How do we absorb into our souls the spiritual joy radiating from Jerusalem on Palm Sunday? My message to

you all is simple. Go to church, observe the procession of the children, take heed to the prayers of the children, and fill your hearts and souls with their joyful presence. In doing so, you will reawaken in your spirit the presence of Jesus, and turn your heart into the city of Jerusalem.

## Holy Week

The week following Palm Sunday is designated in the Christian Calendar as Holy Week. During this time the greatest events of Christ's life are revealed in human history: the Last Supper, the Washing of the Feet, the Passion of Christ, the Crucifixion, the Burial, and above all, the victorious and blessed Resurrection of Christ our Lord as a dawn for humanity.

Through these events we see the humility of the Son of God. He humbled Himself to pave the road for a new life. Holy Week is the most joyous period in the life of a Christian. As we walk with Christ, we become partakers in His sufferings and attain in our spirituality the spirit of the blessed Resurrection.

The Armenian Church and her faithful have lived a life similar to the life of Christ. Holy Week challenges us all to continue to uphold the faith of our forefathers.

The entire Bible is condensed in the ceremony of the Washing of the Feet. The image itself explains the message of Christ our Lord, "*I have come that they may have life and that they may have it more abundantly.*" (John 10:10)





My Dear Faithful in Christ,

As we walk with Christ during Holy Week, let us all pray for one another, strengthen our Christian faith in God and renew our vocation and calling to serve God and humanity. Herewith I present to you a few reflections, so that you may use them as your spiritual bread during your journey towards God.

**Every day, in many ways, we fail to live out our Christian ideals. Each time we fail, we cause a little “death” or pain and sorrow, in someone and in ourselves.**

God is the destiny of our lives. Each time we commit an act unpleasant in the eyes of God and humanity, we feel deep in our spirituality the “little death”. How do we define “little death”? It is the absence of true joy. I believe also that the absence of joy is the absence of God in our lives.

**Prayer is the mirror of our lives.**

To be in solitude in a prayerful life is to meet God and to make God the mirror of our life. The silence rooted in our prayerful life is the moment when we listen to the voice of God and turn it into the echo of our spirituality.

**Do not seek your own advantage.**

This message of St. Paul addressed to the Corinthians (I Cor. 10:24) clearly reflects the human character. In order to free ourselves from the destructive power of our ego, we as humanity must first offer our hearts to God. The more permanent God’s presence is in our spirituality, the more permanently is the ego defeated in our souls.

## **Freedom is the greatest gift of Christianity.**

The greatest gift of Christ to humanity is freedom itself. In Christ humanity lives the true meaning of freedom. For us, as Christians, to be with God means to free ourselves from sin; in other words, from the “old man”.

This is the ultimate purpose of the church: to change human life for the good and also to change the lives of our friends. If a Christian does not cherish the vision and the zeal to change the life of his fellow colleagues, then he is egocentric and has the difficulty to share his God given gifts with his friends.

## **Justice prevails.**

Today’s society suffers from lack of justice. The Gospels convey to us the truth that justice will eventually prevail. The day will come when justice will overcome. In the absence of justice, hatred rules the world and disrupts the peace of humanity. The ultimate goal and direction of Christianity is to be followers of justice and reawaken in our hearts and souls of humanity the zeal to reject hatred.

## **The roots of freedom in the Gospels.**

In today’s life freedom has lost its true meaning. People have confused freedom with extravagance. Freedom dictates to us the highest level of faith, while extravagance leads humanity to destruction. Therefore let us perfect in us the Christian calling to reach the true meaning of freedom and establish unity with God.

## **“You will be my Witnesses.” (Acts 1:8)**

Each Christian has the moral duty to become witness to the life of Christ our Lord. Preaching the Word of God is entrusted to us all. The letters of St. Paul convey the same message. The Apostle explores the idea that the church has to carry on the important mission to spread the Word of God.

## **Conversing with God**

Each prayer is a conversation from our hearts directed to God. Prayer is the very special moment when man and God are in dialogue, it is at this moment that prayer also unites humanity. In our solitude we listen to the voice of God and led by God we direct our steps to a new life. The New life becomes a source of inspiration and light for the love of humanity.

## **Humanity is the vessel of Divine love.**

If we were able to turn our hearts into the vessels of Divine love, the world would be a different place in which to live. The ultimate purpose of human love is to become a vessel of Divine love. The more we share our love, the holier we become and our unity with God is strengthened.

## **“Forgiveness is a true virtue.”**

The Gospel of Christ our Lord teaches the spirit of forgiveness. The Christian who is able to revive in his soul the spirit of forgiveness is truly a happy person who has shaken off the weight which darkens his conscience. As we read the Gospels, we encounter the great image offered to us by the parable of the Prodigal Son, which transforms

our spirit and gives us the strength to turn our lives into miracles.

### **We have gifts that differ.**

The gifts of God are called to life by humanity. The human person is the ground of Divine gifts. How are heavenly gifts defined? They are reflected through a prayerful life. The will of God is reflected in our God-given gifts. Therefore we have the moral obligation to become the carriers of the divine will.

### **Life is a loan from God.**

Life is a loan from God. If we live an irresponsible life then we are practically rejecting God's greatest gift, namely life. Our faith in God and the conscience to live with the mission of Christ are tools with which we may turn our God-given life into a spiritual investment.

### **Strengthen your hearts in holiness.**

Those who pray fervently and continuously lead their lives to holiness. To pray is to live a holy life. Holiness is reflected in the life of all those who live a prayerful life. Holiness is not a spiritual state which we have inherited. Holiness is the legacy of a life lived with sanctity. True joy is rooted in holiness.

### **God, the peace of the world**

The mystery of peace is born from God. Peace is given for humanity, and we are entrusted to guard this gift of peace. Peace rules in all corners of the world where people live with the faith of God. Man is given the divine wisdom to live a God-pleasing life reflected in a creative life.

## **Our Christian faith is the root of all miracles.**

If we are emptied from faith, we have lost the presence of God. Our faith in God is the yeast of a new life. It is through faith that we are able to deepen our spirit, and our consciousness of God's presence.

## **The message of love reflected in our being**

Love is not only an ideological reflection or a message. Love is understood in the sacrificial life of Christ our Lord. The love of Christ is the mover of human souls. Those who are baptized in Christ are strengthened with the mystery of the Holy Resurrection. Through the Resurrection we establish a new dawn in our spiritual life.

## **Christ on the crossroads of the Emmaus of the new ages**

The Christian filled with Christian faith is certainly able to meet God our Lord, who awaits from us all to defeat the darkness of the human souls and to instill in our hearts the hope for a new life. The Gospel of Christ our Lord is a message of hope for humanity. As we nourish our spirituality with the messages of hope emanating from the Gospels, we walk towards God.

## **Ambassadors of Christ**

We all have the duty and the responsibility to become ambassadors of Christ our Lord. We are entrusted with this task, which is an honor bestowed upon us so that we may enrich our spirit with just deeds, and above all to become preachers of the Word of God. The Apostles certainly fulfilled their responsibilities with diligence.

Today we are called by God the Almighty to hear the voice of God through relentless prayer.

**A calling is a gift from God.**

We are all given gifts from God. We all have the responsibility to share our God-given gifts with our fellow brothers and sisters. There is no distinction among our God-given gifts; all gifts are equal in the eyes of God. The only distinction is in the way we share our gifts and enrich our God-given life.

**Prayer is the key of the soul.**

When a Christian is not able to make prayer the permanence of his spirituality, then it loses its significance. The more we pray, the more we feel the presence of God in our lives. The more we pray, the deeper is our relationship with our peers. It is only through a prayerful life that we strengthen the life of our brothers and sisters.

**Clothe yourselves with love. (Col. 3:14)**

Those who follow the messages of Christ our Lord to clothe themselves with the love of Christ are the messengers of the Gospels. Today we witness around us many people whose lives are the reflection of the love of God. Mother Theresa has been one of the most inspirational figures of humanity, whose life has turned to be the miracle of the century and has inspired us all. In fact, her life continues to challenge our lives today.

## **Remember the poor.**

Charity is a virtue of Christianity.

Charity is a practical step in our Christian way of life. One of Christ's most significant acts of service has been to reach out to those in dire need. In performing good deeds and helping others, we literally meet Christ. For Christ abides in humble beings. The world is a sad place when we witness the death of tens of thousands of children on a daily basis. If only humanity would take a practical step to save the lives of children, then the world would attain the true significance of joy.

## **Seek to do good to one another. ( I Thess. 5:15)**

Sacrifice is the foundation of human society. When human beings serve one another, the foundation of humanity is strengthened. We must become competitors in the sacrificial life, thus turning the Gospel onto the context of our spirit. The most perfect example of sacrifice is embodied in Christ our Lord, who descended from Heaven and became the servant of His Disciples. In Him we see the glory of God.

## **You are the light of the world.**

This message of Christ our Lord challenges us, for it reawakens in us the most significant feeling that our God-given life should be lived such that it may turn into the light of humanity. Christians have the moral obligation to share their God-given gifts. In doing so, they advance their steps towards God.

## Committing to God

Commitment. This one word encompasses the practical calling required from us. We are committed when we pray. Commitment is reflected with a new zeal when we are among our fellow brothers and sisters, as we attend special celebrations through works of faith, art and achievement and see the glory of God. Commitment is the most vivid and true reflection of the Christian faith.





Յոզևան Արք. Տրպետյան

Հոգևոր  
Ըանապարհորդություն



## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Հոգեւոր Ճանապարհորդութիւն» վերնագրով այս գիրքը, հեղինակութեամբ՝ Հիւսիսային Ամերիկայ Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, արժան է իրաւ է բնորոշումը, որովհետեւ մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի յարութիւնը կանխող այն մեծ փոսին նախօրեակի քառասուն օրերու ընթացքին, Եկեղեցւոյ կողմէ ճշդուած, պահեցողութեան օրերը իրապէս ճանապարհորդութիւն մըն են առ Աստուած, բայց այդ ճանապարհին նաեւ, ու ամենակարեւորը, հոգեւոր ինքնաքննութեան, ինքնասրբագրումի, ու մանաւանդ՝ հոգեւոր արթնութեան ու պատրաստութեան ամենագեղեցիկ առիթն է, որ տրուած է Աստուծոյ պատկերն ու նմանութիւնը կրող մարդուն:

Քառասուն օրերու ընթացքին, Սրբապան Հայրը, ամենօրեայ դրութեամբ, Աստուծոյ խօսքը եւ իր ներաշխարհի հարստութիւնը՝ հոգեւոր ու մտաւոր, կը փորձէ մաս եւ բաժին դարձնել հաւատարացեալին, եւ ի մասնաւորի երկրասարդին: Այս խորհրդածութիւններով ան կը փորձէ զօրանալ ու զօրացնել, ու մանաւանդ՝ քաջալերել այսօրուան աշխարհին մէջ ապրող մարդը իր վանապան դժուարութիւններով: Հետեւաբար, տեղին է յիշել Պօղոս Առաքեալին խօսքը, որ կ'ըսէ. «*Զօրացէք Տիրոջմով եւ Անոր զօրութեամբ*» (Եփե 6.10), այլապէս

անսոր ու փկար ենք յաղթահարելու ամենօրեայ կեանքի դժուարութիւնները:

Սրբազանը Մեծ Պահքի խորհրդածութիւնները կը սկսի հոգեւոր կեանքի ու քրիստոնեայ մարդուն կոչումին փնտրութիւնով: Ինչպէս ամէն յաջողութեան գաղտնիքը աշխատանքն է, եւ այդ աշխատանքին փնտրութիւնը, այնպէս ալ հոգեւոր կեանքի յաջողութեան գաղտնիքը՝ մեր կոչումին փնտրութիւնն է: Հետեւաբար, Մեծ Պահքը այդ փնտրութիւն գեղեցիկ առիթն է, որ մեզի կը հրամցուի փարուան ընթացքին, մեր անձերը լաւ ճանչնալու եւ հասկնալու, թէ ինչ է մեր կոչումը: Այդ կոչումը՝ *«Օրհնութիւն մըն է Կրողած Աստուծմէ: Ճանապարհ մըն է, որմէ պէտք է քայլել հասնելու Աստուծոյ»:*

Աստուածաշնչական, փարբեր հեղինակներու գրութիւններէն, ու հիմնականին՝ Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին, *«Հաւատով Խոստովանիմ»* աղօթքներու մէջբերումներով, Սրբազանը ինքնաճանաչման, ինքնաքննութեան եւ ինքնասրբագրութեան միտքն է, որ կը պարզէ, երբ մանաւանդ կը մէջբերէ Եսայի մարգարէի խօսքը, որով ճշմարիտ իմաստը կու տայ իսկական պահեցողութեան. *«Իմ ընդունած ծոմապահութիւնս՝ հացդ անօթիին բաժնելը, թափառական տնանկները տունդ ընդունիլը, մերկ մը հագուեցնելը, ու մարմինդ անտեսլն է: ... Այն ատեն քու լոյսդ առաւօտեան լոյսի պէս պիտի ծագի, ու բժշկութիւնդ շուտով պիտի յայտնուի: Այն ատեն պիտի կանչես եւ Տէրը պիտի պատասխանէ»* (Ես 58.6-8):

Վերջին բաժնով, Սրբազանը իր խօսքը կ'աւարտէ աղօթք-մաղթանքով մը: Ան կը թելադրէ իրարու համար աղօթել, որպէս հրամայական,

մեր իրարու նկատմամբ սիրոյ ու քրիստոնէական հաւատքին: Որովհետեւ անով մեր քրիստոնէական հաւատքը կրնանք զօրացնել ու վերանորոգել մեր Աստուծոյ պաւակներ ըլլալու կոչումը, ծառայելու Աստուծոյ եւ մարդկութեան:

Ապա, հանապազօրեայ «հաց»ի նման, ան կը փոխանցէ ուղին պահեցողութեան ճանապարհը քալելու եւ հասնելու առ Աստուած, հետեւեալ մտքերը արտայայտելով.

*«Պահեցողութիւնը առիթ մըն է աղօթքի, Աստուծոյ հանդիպելու եւ Աստուծոյ հետ դէմ յանդիման ըլլալու, որպէս մեր կեանքի հայելին:*

*Պահեցողութիւնը առիթ մըն է մեր անձերէն դուրս գալու եւ ուրիշին մասին մտածելու:*

*Պահեցողութիւնը առիթ մըն է Աստուծոյ խօսքին վկաները դառնալու:*

*Պահեցողութիւնը առիթ մըն է Աստուծոյ հետ խօսակից դառնալու:*

*Պահեցողութիւնը առիթ մըն է մեր անձերը Աստուծոյ սիրոյ տաճարի վերածելու:*

*Պահեցողութիւնը առիթ մըն է ներողամտութեան ոգին զօրացնելու մեր մէջ:*

*Պահեցողութիւնը առիթ մըն է մեզի տրուած շնորհներուն մասին մտածելու:*

*Պահեցողութիւնը առիթ մըն է մեզի տրուած Աստուածապարգեւ կեանքը սրբութեամբ ապրելու:*

*Պահեցողութիւնը առիթ մըն է Աստուծոյ խաղաղութիւնը աշխարհին բաշխելու:*

*Պահեցողութիւնը առիթ մըն է մեր հաւատքի ճամբով հրաշքներ գործելու:*

*Պահեցողութիւնը առիթ մըն է Աստուծոյ սիրոյ ճառագայթը դառնալու մեր շրջապատին:*

*Պահեցողութիւնը առիթ մըն է Քրիստոսի  
դեսպանները ըլլալու:*

*Պահեցողութիւնը առիթ մըն է աշխարհի  
լոյսը եւ երկրի աղը դառնալու:*

*Պահեցողութիւնը առիթ մըն է մեր անձերը  
Աստուծոյ ընծայելու իբրեւ կենդանի պատարագ»:*

Սիրելի հաւատացեալներ,

Եկէք կարդանք Սրբապան Հօր մտքի ու հոգիի  
հարստութենէն բխած այս խորհրդածութիւնները,  
եւ վանոնք մաս ու բաժին դարձնենք մեր առօրեայ  
կեանքին, հարստացնելու համար մեր հոգեւոր  
կեանքը:

Թող այս խորհրդածութիւնները «երկու լումա»  
ըլլան մեր հոգեւոր կեանքի գանձանակին մէջ:

Ի վերջոյ, թող ամենաբարին Աստուած Ինք  
ընդունելի ընէ մեր բոլորին աղօթքներն ու պահե-  
ցողութիւնը:

Բարի ճանապարհորդութիւն առ Աստուած:

Մաշտոց Չօպանեան

# ՀՈԳԵՒՈՐ ՃԱՆԱԴԱՐՅՈՐԴՈՒԹԻՒՆ

Կիրակի, 02. 26. 06

## ԻՄ ԿՈՉՄԱՆ ՈՐՈՆՈՒՄՈՎ

Մեծ Պահիքի ճանապարհորդութիւնը ձեր աստուածատուր կեանքի ամէնից յուրիչ եւ հոգենորոգ շրջաններից մէկն է: Սա այն ժամանակն է, երբ քրիստոնէան քայլում է Քրիստոսի հետ՝ նորոգելու համար իր անձնական կոչումը: Այդ իսկ պատճառով այս ճանապարհորդութիւնը պէտք է լինի ձեր հոգեւոր կեանքի ամէնից ոգեկոչող եւ մարտահրաւէրներ արթնացնող ժամանակներից մէկը, ձեր քրիստոնէական կեանքը վերազննելու եւ վերարժեւորելու շրջանը:

Իբրեւ մարդ արարածներ՝ մենք մշտապէս կարիք ենք զգում հոգեւոր նորոգման: Մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, ընտրեց Իր երկրային կեանքը ապրելի առանձնացումի եւ աղօթքների մէջ: Ուրեմն, որքան եւս առաւել մենք պիտի գիտակցենք կարիքը հետեւելու Քրիստոսի օրինակին եւ մուտք գործելու հոգեւոր կեանքից ներս, որը մեկ

կը տայ ինքնաճանաչում եւ հոգեւոր արթնութիւն:

Իմ սիրելի երիտասարդներ, իմ պատգամն է ձեզ, որ գործնականի վերածէք հսկումների այս շրջանը աղօթքների եւ պահեցողութեան միջոցով: Ես խրախուսում եմ ձեզ, որ Մեծ Պահոց այս 48 օրերը դարձրնէք ձեր անձնական ճանապարհորդութիւնը: Հաւաստիացնում եմ, որ յատուկ ժամանակ որոշելով ձեր հոգեւոր կեանքի եւ աղօթքների համար, հետեւելով մեր աւանդութեամբ հաստատուած պահոց հսկումներին եւ ձեր հաւատքը այս շրջանում էլ աւելի գործնականի վերածելով, դուք առաւել խորութեամբ կ'ըմբռնէք ձեր հոգեկան ներաշխարհը:

Մանկութիւնիցս ի վեր ես փորձել եմ հնարաւորինս կատարել պահքի պահանջները: Ես չեմ կարող պնդել, որ առանց բացառութեան յաջողել եմ իրականացնել հաւատաւոր հայորդուց պահանջուած պարտականութիւնները, սակայն հաւաստիացնում եմ ձեզ, որ կատարելով հսկումները՝ հոգիս առաւել հարստացրել եմ: Այդ իսկ պատճառով ձեզ կոչ յղելու հետ մէկտեղ մարտահրաւէր եմ կարդում ինքս ինձ՝ լինել առաւել հետեւողական եւ իրապէս նորոգել իմ քրիստոնէական կոչումը:

Սիրելիներ, Մեծ Պահոց այս շրջանին, ես խոստանում եմ շաբաթական հիմքերով ձեր խորհրդածութեանը յանձնել հոգեշունչ մանրապատումներս: Ինձ համար նրանք կը



հանդիսանան պահքի ճանապարհը անցնելու կարեւոր քայլերից մէկը, կը նպաստեն զգօնութեանս ամրապնդմանը եւ հաւատացած եմ, որ նոյնը կը փոխանցեն նաեւ ձեզ:

Այս տարուայ Պահքի ճանապարհորդութեան թեման անուանել եմ *«Իմ կոչման որոնումով»*: Իրաքանչիւր պատգամ պիտի լինի մի նոր քայլ Աստծու հետ ընթանալու ճանապարհին եւ մեր սրտերում կ'արթնացնի աստուածային կոչման գիտակցութիւնը:

*«Ի՞նչ է իմ կոչումը. Այն Աստծու օրհնութիւնն է: Այն իւրայատուկ ճանապարհն է, որն Նա սահմանել է մեզ համար այստեղ, այս աշխարհում: Երբ մենք մեր սրտերին խնդրութիւն պատճառող մի արարք ենք կատարում, հետեւում ենք մեր ժառանգութեանը: Բայց եւ այնպէս մեզանից ոչ բոլորը ունեն խիզախութիւնը առերես կանգնելու մեր իսկ երազանքներին յանդիման»:*

(Պաուլօ Քարեթօ)

Ուրեմն, Մեծ Պահոց ճանապարհորդութիւնը մեր սրտերին լսելու ժամանակն է: Այն նաեւ ժամանակն է Աստծու հետ ապրելու, ինչպէս որ Պօղոս Առաքեալն է ասում. *«Ինձ համար Քրիստոս կեանք է»:*



*«Գանձեր մի՛ դիպէք ձեզ համար երկրի վրայ, ուր ցեց եւ ծանգ ոչնչացնում են, եւ ուր գողեր պատերն են ծակում ու գողանում, այլ գանձեր դիպեցէ՛ք ձեզ համար երկնքում, որտեղ ո՛չ ցեց եւ ո՛չ ծանգ չեն ոչնչացնում, եւ ո՛չ էլ գողերը պատերն են ծակում ու գողանում. քանի որ, ուր ձեր գանձերն են, այնտեղ եւ ձեր սրտերը կը լինեն»*

(Մատթ. 6:19-21)

Մեծ Պահքի ճանապարհորդութեան 48 օրերը յատուկ ժամանակահատուած են, որոնք մեզ ուղղորդում են աղօթքի, ծոմապահութեան, իսկ ամէնից աւելի՝ մեր հոգեւոր աշխարհի խորքերը, որպէսզի կարողանանք խորացնել ու ամրապնդել մեր քրիստոնէական հաւատքը, դրանով իսկ վերաբժեւորելով մեր աստուածատուր կեանքը: Մեր Տէր Յիսուս Քրիստոսի խօսքերը առաջնորդում են մեզ հոգեւորոգ կեանքի: Մենք բոլորս քաջ գիտենք, որ այս կեանքում վաստակուած գանձերը ի վերջոյ սպառուելու են ցեցի եւ ծանգի պատճառով: Մենք նաեւ գիտենք, որ աշխարհային գանձերը մեզ չեն կարող պարգեւել ճշմարիտ ուրախութիւն, քանի որ հոգեկան ուրախութիւնը շատ աւելի արժէքաւոր եւ իրական է, քան աշխարհայինը: Ահա սա է պատճառը, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը մեզ պատուիրեց, գանձեր դիպել երկնքում,

որպէսզի մեր սրտերը նոյնպէս այնտեղ գտնուեն:

Մեծ Պահքը ճանապարհորդութիւն է դէպի Սբ. Չատիկ: Պահքի գործնական նշանակութիւնը որպէս ճանապարհորդութիւն շատ նշանակալից է մեր հանապապօրեայ կեանքում: Այս ճանապարհորդութեան ոգին մեզ կարող են առաւելաբար մեկնել Պօղոս Առաքեալի հետեւեալ խօսքերը՝ ուղղուած հոռմէացիներին. *«Մկրտութեամբ թաղուեցինք նրա հետ մահուան մէջ, որպէսզի, ինչպէս որ Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք քայլենք նոր կեանքով»* (Հռոմ. 6:4):

Ուրեմն, Մեծ Պահքը կարելի է համարել ճանապարհորդութիւն, որն առաջնորդում է մեզ ներքին ինքնաքննումի եւ զինում է մեր հոգեւոր կեանքը Քրիստոսի պօրութեամբ:

Երեքշաբթի, 02. 28. 06

*«Երբ ծով պահէք, տրամերես մի՛ լինէք կեղծաւորների նման, որոնք իրենց երեսները այլանդակում են, որպէսզի մարդկանց այնպէս երեւան, թէ ծով են պահում. ճշմարիտ ասում եմ ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը:*

*Այլ երբ դու ծով պահես, օծի՛ր քո գլուխը եւ լուա՛ քո երեսը, որպէսզի չերեւաս մարդկանց որպէս ծով պահող, այլ քո Հօրը՝ գաղտնաբար, եւ քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կը հատուցի քեզ»:*

(Մատթ. 6:16-18)

Այս խօսքերը բացայայտ կերպով ցոյց են տալիս, որ ծոմապահութիւնը անձնական յանձնարարական եւ անհրաժեշտութիւն է ու ամենեւին էլ կարելոք չէ այն ի ցոյց դնել մարդկանց: Պահեցողութեան նպատակը շատ պարզ է. մարպել մեր մարմինները՝ հրաժարուելու կենդանական կերակուրներից, դրանով իսկ նպաստելով մեր հոգեկանութեան հարստացմանը: Այդ իսկ պատճառով պահեցողութիւնը մի վիճակ է, որը սնում է հոգին եւ որի օգուտները բազմաթիւ են: Բաշրա Խանը իր *«Երբ պահեցողութիւնը սնում է հոգին»* խորագիրը կրող յօդուածի մէջ հետեւեալն է ասում. *«Պահեցողութիւնը օգնում է եղբայրութեան եւ միասնութեան աճին, ինչպէս նաեւ մարդկանց փոխադարձ կարեկցանքին: Հարուստ մարդը մտովի կարող է հասկանալ քաղցը, սակայն քաղցը ինքնին մի այլ իրավիճակ է»:* Այս պարզ մօտեցումը բացատրում է ծոմապահութեան օգուտները: Ծոմապահութեան միջոցով մենք կարող ենք զգալ քաղցը եւ դրանով իսկ վայրկեանապէս մասնակից դառնալ հասարակութեան սովեալների տառապանքներին: Պահեցողութեան իրական իմաստը իր լրումին է հասնում, երբ մենք ապրում ենք աղօթաբոյր կեանքով եւ այն առատացնում հաւատքի վկայութիւններով: Պահեցողութիւնը նպաստում է մեր կեանքի զօրեղացմանը, կարգաւորութեանն ու վճռականութեանը՝ հետեւելու մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի պատգամներին: Ուրեմն, չմոռանանք Քրիս-

տոսի խօսքերը, թէ պահեցողութիւնը մի  
ընթացք է անհատի եւ Աստծու միջեւ. «Այլ  
երբ դու ծով պահես, օձի՛ր քո գլուխը եւ  
լուս՛ քո երեսը, որպէսզի չերեւաս մարդ-  
կանց որպէս ծով պահող, այլ քո Հօրը՝  
գաղտնաբար, եւ քո Հայրը, որ տեսնում է,  
ինչ որ ծածուկ է, կը հատուցի քեզ»:

Չորեքշաբթի, 03. 01. 06

*«Մարմնի ճրագը աչքն է. եթէ քո աչքը  
պարզ է, քո ամբողջ մարմինը լուսաւոր կը  
լինի: Իսկ եթէ քո աչքը պղտոր է, քո ամբողջ  
մարմինը խաւար կը լինի: Եւ արդ, եթէ քո  
մէջ եղած լոյսը խաւար է, ապա խաւարը՝  
որչա՛նք էւս աւելի»:*

(Մատթ.6:22-23)

Որքա՛ն օգտակար են Յիսուսի այս  
խօսքերը նրանց համար ովքեր խնամքից  
զրկում են իրենց աչքերը՝ մարմնի ճրագ-  
ները: Եթէ մենք հեռացել ենք մեր հաւատ-  
քից եւ չենք սնում այն, հաւատքը դադար-  
ում է մարմնի ճրագը լինելուց եւ ինչպէս  
Ինքը՝ Յիսուս ասաց. «Մարմնի ճրագը աչքն  
է. եթէ քո աչքը պարզ է, քո ամբողջ մար-  
մինը լուսաւոր կը լինի: Իսկ եթէ քո աչքը  
պղտոր է, քո ամբողջ մարմինը խաւար կը  
լինի: Եւ արդ, եթէ քո մէջ եղած լոյսը խա-  
ւար է, ապա խաւարը՝ որչա՛նք էւս աւելի»:

Եկեղեցին համայնքի կեանքում այդ աչքն  
է եւ պարտականութիւն ունի վերածուելու  
իր հաւատացեալի համար մարմնի լուսաւոր

ճրագի: Իսկ եթէ Եկեղեցին ձախողի իր պարտականութիւնների մէջ, մարմինը կը թուլանայ եւ կ'ընկղմուի իրարի մէջ: Քանի դեռ Եկեղեցին շարունակում է իր առաքելութիւնը լինելու մարմնի ճրագը՝ հաւատարմոր հօտը շարունակում է մնալ լոյսի մէջ: Նոյնը վերաբերում է նաեւ ընտանեկան կեանքին, որտեղ ծնողներն են հանդիսանում երեխաների ճրագը եւ ընտանիքի աչքերը: Եւ ուրեմն, եթէ ծնողները կատարեն իրենց պարտականութիւնները, երեխաները կ'աճեն ու կը վարգանան ճշմարիտ քրիստոնէական հաւատքի մէջ: Բայց եթէ աչքերը, այսինքն՝ ծնողները, անհոգ գտնուեն իրենց աստուածատուր պարտականութիւնները կատարելու մէջ, ապա նրանց երեխաներն էլ կը մոլորուեն եւ անմասն կը մնան աստուածային շնորհներից: Հանապազօրեայ աղօթքներն ու պահեցողութիւնները իբրեւ հոգեւոր սնունդներ, ուղղորդում են մեզ դէպի աստուածային ճշմարտութեան, իսկ ամենից առաւել՝ Աստծուն: Մենք նոյնիսկ կարող ենք էլ աւելի խոր կերպով ըմբռնել այս իրականութիւնը, Քրիստոսի հետեւեալ պատգամի օգնութեամբ. «*Մարմնի ճրագը աչքն է*», հետեւաբար առանց քրիստոնէական հաւատքի կեանքը աննպատակ է դառնում: Միայն հաւատքն է, որ մեզ կարող է զօրացնել չարի դէմ պայքարում: Միայն հաւատքն է, որ միացնում է մեզ Աստծու հետ եւ Նրա մէջ ենք մենք զգում ու ապրում ճշմարիտ իմաստութիւնը: Մեր Տէրը՝

Յիսուս Բրիստոս, գոհաբերեց Իր կեանքը մեզ համար, որպէսզի Իր մէջ մենք գտնենք հոգեկան ուժն ու Վճարութիւնը՝ լուսաւորելու համար մեր կեանքերը: Յիսուս Ինքը աղօթեց եւ Վգաց անհրաժեշտութիւնը աղօթանուէր կեանքի, այդ իսկ պատճառով էլ որպէս մարդ անհատներ մենք կենսական կարիք ունենք աղօթքի եւ դէպի հոգու խորքերն ուղղուած ճանպարհորդութեան:

Հինգշաբթի, 03. 02. 06

*«Մարդն աղօթքի ամբողջական լրումին է հասնում, ոչ թէ ինքնաարտայայտման ժամանակ, այլ երբ թոյլ է տալիս, որ Աստուած լիարժէք կերպով ներկայ լինի իր աղօթքների մէջ»*

(«Յոյսի շէմքը հասելիս»  
Յովհաննէս Պօղոս Բ. Պապ)

Մեր Տէրը՝ Յիսուս Բրիստոս, Իր առաքելներին ուսուցանեց Տէրունական աղօթքը, որպէսզի այն արտացոլի մեր ներքին Վգացումները: Բայց աղօթքը պէտք է արտացոլուի նաեւ մեր գործերում: Միայն առաքինի կեանքով ապրելը բաւարար չի համարուի, եթէ այն չտարածի քրիստոնէական ոգեկանութիւնն ու վարդապետութիւնը: Գուշակեան Պատրիարքը հետեւեալ կերպ է սահմանում աղօթքի կարեւորութիւնը. *«Մեր սրտերի նուիրումը,՝ այսինքն մեր անհատական անձնուէր կեանքը անօգուտ է, եթէ այն նպատակաւորուած չէ խաղա-*

դուրեանը, մխիթարութեանը եւ իհարկէ՛ համայնքային կեանքի նորգմանը: Երբ մենք խօսում ենք դէպի Աստուած մեր ունեցած նուիրումի մասին, պէտք է գիտակցենք, որ միեւնոյն այդ նուիրումը նպատակաւորուած պիտի լինի մարդկութեան բարօրութեանը: Աստուծու կամքն ու քրիստոնէական մեր հաւատքի ու բարոյականութեան պահանջն է մեզ նուիրել Յիսուս Քրիստոսին, եւ դրանով իսկ՝ մեր ընկերների բարեկեցութեանը: Այս ամէնը իրագործելով է, որ մենք պիտի կարողանանք ըմբռնել Աստուծու կամքը: Համատիեպերական Աստուծու հայրական կոչումը փառաւորում է համընդհանուր եղբայրութեան իրողութեամբ»:

Ուրբաթ, 03. 03. 06

«Առանձնութիւնը պայքարների ու հանդիպումների իւրայատուկ վայր է: Պայքարներ ընդդէմ մեր անձնական թիր մոլութիւնների եւ հանդիպումներ սիրող Աստուծու հետ, որ մեզ առաջարկում է նոր կեանքի իր գոյամիջոցները»:

(«Սրտի ճանապարհը»  
Հենրի Նիւման)

Աղօթքի նշանակութիւնը բազմազան է: Նրա ամենից Կօրեղ արտայայտութիւններից մէկն էլ առանձնութիւնն է: Իրապէս անհնար է առանձնութեան ամբողջ իմաստը բացատրել մի միայն մի քանի բառերով: Իսկ ի՞նչն է առանձնութեան ամենից



կարելոք դրսեւորուիմք: Առանձնութեան մէջ գտնուող մարդը նա է, ով յաճախ իրեն գտնում է որոշակի վայրում (*ոչ անհրաժեշտաբար նիւթական*), որտեղ նա մի կողմից պայքարում է աշխարհային կեանքի դէմ, իսկ միւս կողմից ինքն իրեն գտնում է Աստծու ներկայութեան մէջ: Այսօրուայ աշխարհը իրենից ներկայացնում է աղմկոտ եւ խառնիճադաւնճ մի իրականութիւն, մինչդեռ մեր հանդիպումը Աստծու հետ վերահաստատում է մեր մէջ Իր սէրը, որպէս նոր կեանքի մի սերմ: Իրաքանչիւր աղօթք իր մէջ պարունակում է դէպի նոր կեանք առաջնորդող զօրութիւն: Ի վերջոյ մարդկանցից ո՞վ է մեղքերից զուրկ: Ես կարող եմ խոստովանել, որ իմ անձնական կեանքում յաճախ թուլութիւններ են դրսեւորուել, սակայն աղօթանուէր կեանքի եւ առանձնութեան շնորհիւ ի վիճակի եմ եղել ստեղծել մի նոր սկիզբ եւ որպէս նոր կեանքի ակունք ունենալ հոգեկան իրայատուկ մղում: Այդ պահերին իսկապէս շնորհակալութիւն եմ յայտնել Աստծուն, որ ի վիճակի եմ եղել ստանալ նոր կեանքի թթիւմորը: Առանձնութեան կեանք արելու կարող անձինք ի վիճակի են քայլել Աստծուն առաջնորդող ճանապարհով՝ նոր տեսիլքներով եւ ուժականութեամբ:

Շաբաթ, 03. 04. 06

*«Առանձնութիւնը փոխակերպման մի վայր է, որտեղ մեր հին մարդը մահանում է*

*եւ ծնունւմ է նոր մարդը, որտեղ նոր տղամարդու եւ կնոջ յայտնուելն է կայանում»:*

(«Սրտի ճանապարհը»  
Հենրի Նիւման)

Սա շատ հրաշալի մի միտք է, որն արտայայտում է հաւատքի իսկութիւնը: Անդրադառնալով առանձնութեանը, Հենրի Նիւմանը մեկնում է այն հոգեկան վիճակը, որ մտնելով մարդու կեանքից ներս նպաստում է հին մարդու մահուան եւ նոր մարդու ծնունդին: Սա այն պահն է, երբ մարդ անհատը նուիրում է իրեն առանձնութեանը եւ դրանով իսկ մշակում ու պարզացնում է իր հոգեւոր աշխարհը: Ուրիշ խօսքով այս պահը նաեւ ապաշխարութեան պահ է: Մասնաւոր այս վիճակը մեզ ոյժ է տալիս հեռացնելու մեր սրտերից եւ հոգիներից բոլոր չար մտքերը եւ փոխարէնը ապրելու նոր սկզբնաւորութեամբ: Սա այն պահն է, որը մենք կոչում ենք հոգեւոր վերածնունդ: Այնքան որքան մենք կարիք ենք զգում հացի եւ ջրի, նոյնքան եւս կարիքը պիտի զգանք հոգեւոր վերածնունդի: Դրա համար էլ եկէք վերարժեւորենք Հենրի Նիւմանի վերոնշուած խօսքերը եւ կարողանանք հասնել առանձնութեան կարեւորութեան գիտակցութեանը. «*Առանձնութիւնը փոխակերպման մի վայր է, որտեղ մեր հին մարդը մահանում է եւ ծնունւմ է նոր մարդը*»:

Մեծ Պահոց շրջանը՝  
ժամանակ ինքնամաքման

*«Աղօթել նշանակում է մտովի մուտք գործել սրտի խորքերը, եւ այնտեղ դէմ յանդիման կանգնել մշտապէս ներկայ եւ ամենատես Աստծու առջեւ»:*

(Թէոփան ճգնաւոր)

Աղօթքն ու ծովապահութիւնը մեծ նշանակութիւն ունեն մեր անձնական կեանքում: Ես անհրաժեշտութիւն եմ զգում իմ անկեղծ խոհերն ու զգացումները կիսել ծովապահութեան ատանդութեան եւ աղօթքի վերաբերեալ: Երբ ես քարոզում եմ աղօթքի կամ պահեցողութեան մասին, նախ եւ առաջ հաւաստիացնում եմ, որ իմ խօսքերն արտացոլում են անձնական կեանքս: Այն ինձ տալիս է Աստծու խօսքը առաւել համոզումով քարոզելու խիզախութիւն եւ ոյժ, որպէսզի եկեղեցում գտնուող հաւատացեալները հնարաւորութիւն ունենան իրենց սրտերից ներս ընդունել հոգեկան նոր ոճի սնուցումներ:

Մեծ Պահոց երկրորդ Կիրակին կոչւում է «Արտաքսման Կիրակի», որն յիշեցնում է մեզ Ադամի ու Եւայի արտաքսումը Եդեմական պարտէպից: Աստուած Ադամին արտաքսեց պարտէպից նրա անհնազանդութեան պատճառով, դրանով հանդերձ, սակայն մարդկութեանը հնարաւորութիւն տւեց աղօթքի միջոցով իր էութեան մէջ վե-

բանորոգելու ամենակարող Աստծու յաւիտենական պատկերը, բայց այս ամենից առաւել՝ մեզ առաջնորդելու ինքնամաքման: Այս վերոյիշեալ գաղափարն էլ հանդիսանում է Մեծ Պահքի ճանապարհորդութեան վերջնանպատակը, որի ընթացքում աղօթքը, ծոմապահութիւնը եւ հոգեւոր ընթացումները այն կարեւորագոյն գործօններ են, որոնցով մշակուում է մեր մէջ աստուածահաճոյ կեանք ապրելուն պատրաստ նոր մարդը: Այս ամենի հետ մէկտեղ աղօթքներն ու ծոմապահութիւնը պէտք է արտացուցուէն մեր անձնական կեանքում: Մեր Տիրոջ խօսքերը պոռնակներէն մեզ ուշադիր լինել ծոմապահութեան կատարման ձեւերի մէջ: Ես շատ յաճախ կարդում եւ վերընթերցում եմ Մատթէոսի Աւետարանում տեղ գտած հետեւեալ հատուածը.

*«Երբ ծոմ պահէք, տրամերես լի՛ լինէք կեղծատրների նման, որոնք իրենց երեսները այլանդակում են, որպէսզի մարդկանց այնպէս երեւան, թէ ծոմ են պահում. ճշմարիտ ասում եմ ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը:*

*Այլ երբ դու ծոմ պահես, օձի՛ր քո գլուխը եւ լուա՛ քո երեսը, որպէսզի չերեւաս մարդկանց որպէս ծոմ պահող, այլ քո Հօրը՝ գաղտնաբար, եւ քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կը հատուցի քեզ» (Մատթ. 6:16-18):*

Մեծ Պահոց ճանապարհորդութիւնը իմաստութեամբ է սնում մեր մտքերն ու հոգիները, որպէսզի մեր կեանքը ըմբռնենք

իբրեւ Աստուծոն փնտռելու գերագոյն կոչում, փնտռենք քրիստոնէական մեր ինքնութիւնը եւ ճշմարիտ քրիստոնէական ընկերասիրութիւնը:

Մեծ Պահքը պէտք է ապրել իւրայատուկ եղանակով, որպէսզի այն մեզ համար վերածուի ինքնամաքման, անցեալի վերարժեւորման, իսկ ամենից առաւել՝ պատրաստի մեր անձերը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի աստուածապէս Յարութիւնը տեսնելուն:

Երկուշաբթի, 03. 06. 06

*«Աստուած ոչ այնքան օրհնում է մեծարժէք տաղանդները, որքան մեծագոյն նմանութիւնը Քրիստոսին»:*

(Ռոբերտ Մուռէյ Սաք Չէյնի)

Աստուածային շնորհները մեզ երկնքից են տրուած եւ մենք պարտաւոր ենք օգտագործել նրանք մեր հոգեւոր կեանքերը պինդելու համար, որպէսզի վերածուենք Քրիստոսի ճշմարիտ հետեւորդների: Յիւրաւի չափազանց կարեւոր է մեծ ուշադրութիւն դարձնել Տիրոջ հետեւեալ խօսքերին. «Հետեւեցէ՛ք ինձ»:

Խօսելով շնորհների եւ պարգեւների մասին կարեւոր եմ համարում ուշադրութեան արժանացնել Ա. Կորնթացիս թղթի հետեւեալ համարները. «Թէեւ կան շնորհների զանազանութիւններ, բայց պարգեւտող Հոգին նոյնն է...Մարմնի այն անդամ-

ները, որ թուում է, թէ աւելի տկար են, կարեւորներն են...որպէսզի մարմնի մէջ բաժանումներ չլինեն, այլ որպէսզի այդ անդամները նոյն հոգը տանեն միմեանց նկատմամբ» (Ա. Կորնթ. 12:4,22,25):

Երեքշաբթի, 03. 07. 06

*«Այս առաւօտ արթնացայ՝ միտքս սեւեռած ապատութեան վրայ»*

(Մարթին Լիթեր Քինգ Կրտսեր)

Կարդալով Մարթին Լիթեր Քինգի *«Ինչո՞ւ չենք կարող սպասել»* գիրքը, ես ինքնաբերաբար կենտրոնանում եմ աղօթքի կարողութիւնների վրայ: Ինչպէս որ հնարաւոր է սեւեռել մեր միտքը ապատութեան վրայ, այնպէս էլ հնարաւոր է արթնանալ ամէն առաւօտ, մեր մտքերը կենտրոնացած աղօթքի վրայ: Այսպէս անելով մենք ի վիճակի կը լինենք մեր հոգեւոր կեանքը վերակերտելու: Յիրաւի, ճիշտ է, որ աղօթքը առաջնորդում է մեզ դէպի Աստուած: Հաւասարաչափ ճիշտ է նաեւ, որ հաւատքը ամրապնդում է մեր մէջ բարի կեանքով ապրելու ցանկութիւնը: Յիսուս Ինքն ապրեց աղօթանուէր կեանքով եւ միեւնոյն ժամանակ առաջնորդեց Իր աշակերտներին իրենց ընթացքը վերափոխելու: Ուրեմն, եկէք ապրենք Մարթին Լիթեր Քինգի նման մի կեանք եւ ամէն առաւօրտ իր խօսքերը կրկնենք մեզ բնորոշ իրայատուկ ոճով:

*«Այս առաւօտ արթնացայ իմ միտքը սեւե-  
նած աղօթքի վրայ»:*

Չորեքշաբթի, 03. 08. 06

*«Մարդ անհատը իր թերութիւններով  
էւ առաւելութիւններով հանդերձ, իրենից  
ներկայացնում է շարժումի մի իւրայատուկ  
շղթայ: Նա պէտք է սխալներ գործի էւ իր  
սխալներից դասեր քաղի, նա պէտք է ճա-  
շակի, թէ պարտութեան էւ, թէ յաղթանակի  
բոյրը: Եւ դրանով իսկ բացայայտի, թէ  
ինչպէս պէտք է ապրի նրանց ընթացքում:  
Ժամանակն ու շարժումը նրա ուսուցիչներն  
են»:*

(Մարթին Լիթեր Քինգ Կրտսեր)

Այս բառերը մեզ մարտահրաւէր են  
կարդում՝ վննելու մեր ներքին հոգեկան  
աշխարհը: Ես շատ յաճախ մտածում եմ, որ  
մարդկային առաջընթացի այս շարժումը էւ  
գիտութեան պարգացումը ի Կօրու չեն  
շղարշելու մարդ արարածի թոյլ էութիւնը,  
որը յստակ երեւում է ամենակարող Աստ-  
ծու գոյութեան մէջ: Բայց էւ այնպէս մարդ-  
կային բնութիւնը քրիստոնէայ անձի մէջ  
հնարաւորութիւն ունի ստանալու դէպի  
Աստուած առաջնորդող մեծագոյն տեսիլքը:  
Սա այն պահն է, երբ մենք ներքնապէս  
վերափոխուում ենք: Այս տեսակէտից մարդն  
արարչագործութեան պսակն է:

Մարթին Լիթեր Քինգի վերոյիշեալ  
խօսքերը մատնացոյց են անում մեզ, որ

ժամանակն ու շարժումը կեանքի ամենամեծ ուսուցիչներն են: Եւ այս տեսակէտից Մեծ Պահքի ճանապարհորդութիւնը քրիստոնէայ անհատի կեանքում մի յատուկ ժամանակ է, որը նրան հնարաւորութիւն է տալու արժեւորել իր աստուածատուր շնորհները, այսինքն՝ ժամանակն ու շարժումը եւ արտացոլել դրանք իր կեանքի գալիք օրերում:

Հինգշաբթի, 03. 09. 06

*«Հաւատարմութիւն Աստծուն»:*

(Մարթին Լիթեր Բինգ Կրտսեր)

*«Մենք բոլորս գիտենք, որ մարդիկ ապրում են իրայատուկ անձանց ապրելաճից, այնպիսիներից ովքեր իրենց կեանքը վստահել են Աստծուն: Այդ անելով Աստուած դառնում է նրանց կեանքի հիմնաքարը»:* Մարթին Լիթեր Բինգի՝ *«Ինչո՞ւ մենք չենք կարող սպասել»* գիրքը կարգալուրնթացքում, ես հանդիպեցի մարդու, ում ուխտը դէպի քրիստոնէական հաւատքը ակնյայտ էր: *«Մենք չենք կարկամում մեր շարժումը բանակ կոչելուց, բայց այն իրայատուկ բանակ է, որը պիտի արշաւի ատելութեան ամբոցի վրայ, պաշարի ջոկողութեան բերդերը, շրջապատի խտրականութեան խորհրդանիշները: Մա նաեւ մի բանակ է, որի հաւատարմութիւնը Աստծուն ինչպէս նաեւ մարտավարութիւնը թելադրուած են խղճի կողմից»:*



Այս ամբողջ հատուածը արտացոլում է Աւետարանի ոգին, այլ խօսքերով այն հաշուետուութիւն է անձի հաւատքի եւ ուխտի հանդէպ: Ես պատրաստակամ եմ սնուցել իմ հոգին նոր հոգեւոր հացով: Աստծու հանդէպ հաւատարմութիւնը կեանքի յատուկ մի ուղի է: Նրանք ովքեր ապրում են այսպիսի կեանքով աշխարհի խաղաղարարներն են:

*«Նրանի խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծու որդիներ պիտի կոչուեն» (Մատթ. 5:9):*

Ուրբաթ, 03. 10. 06

*«Հին Կտակարանի մէջ Աստծուն տեսնելը մահ էր նշանակում, նորում՝ Աստծուն տեսնելը նշանակում է կեանք»:*

(Էնթընի Արք. Բլում)

Այս նախադասութիւնը իր մէջ պարունակում է քրիստոնէութեան ամբողջ ոգին: Իբրեւ ճշմարիտ քրիստոնեաներ մենք բոլորս ըմբռնում ենք այն փաստը, որ *«Աստծուն հանդիպելը կեանք է նշանակում»:* Այս խորհուրդը արտացոլում է մարդկութեան կեանքում, մեր Տէր եւ Փրկիչ՝ Յիսուս Բրիստոսի Մարդեղացման շնորհիւ: Յիսուս խոնարհեցրեց Իր անձը, որպէսզի մեզ համար նախապատրաստի դէպի Աստուած տանող ճանապարհը:

Մեծ Պահոց ճանապարհորդութեան ընթացքում մենք բոլորս մեր ուշադրու-

թիւնը պիտի կենտրոնացնենք Աստծուն հանդիպելու մտքի շուրջ: Անձնապէս ինձ համար դժուար է Աստծու հանդէպ տածած ներքին զգացումներս արտայայտել: Մակայն ես կարող եմ վստահեցնել, որ Աստծու ներկայութիւնը ամուր կերպով զգալի է իմ կեանքում, մասնաւորաբար Մեծ Պահքի աղօթքների եւ ծոմապահութեան ընթացքում:

Աւետարանի ընթերցումները առաջնորդում են մեզ դէպի Աստուած: Առաւել կարեւորը սակայն այն է, որ այս վերոյիշեալ հոգեւոր վարժութիւնները՝ վերածուեն հոգու եւ մտքի հաստատուն իրավիճակի՝ առաւելաբար Մեծ Պահոց շրջանում:

Շաբաթ, 03.11.06

*«Համաձայն աստուածաշնչային ուսուցումի մարդ արարածը ստեղծուել է Աստծու պատկերով եւ նմանութեամբ եւ իր մէջ է կրում այդ պատկերը: Այդ իսկ պատճառով նա պէտք է իբրեւ ուղենիշ կամ մագնիս գործի, որպէսզի կարողանայ մարդկանց մօտեցնել աստուածային նմանութեան: Աստծուն ուղղուած մեր աղօթքներն ու ծիսակատարութիւնները, յիրաւի այն միջոցներն են, որոնց օգնութեամբ այս անգին շնորհները զարգանում եւ արմատաւորւում են մեր մէջ»:*

(Ջոն Մեգուարի)

Մենք շատ յաճախ լսում ենք այն խօսքերը, թէ մարդը ստեղծուած է Աստծու

պատկերով եւ նմանութեամբ: Սակայն արդեօք մենք ըմբռնում ենք այն մեծ պատասխանատուութիւնը, որն արտայայտում է այս միտքը: Ակնյայտ է, որ բոլորն էլ հասկանում են այս մտքի հիմնական իմաստը, բայց իրաքանչիւր անհատ կեանքի մարտահրաւէրներին դիմակայում է իւրովի: Չոն Մեգուարի վերոյիշեալ խօսքերը ոգւորում են մեզ այն հիմնական համոզումով, թէ աղօթքը արտացոլում է մեր կեանքերը: Աղօթող անձը ի վիճակի է ճանապարհորդել դէպի իր սրտի խորքերը եւ դրանով իսկ հաստատականութիւն յայտնել պահպանելու իր աստուածանման պատկերի մաքրութիւնը:

Կիրակի, 03. 12. 06

### Անառակ Որդու Կիրակի

Ղուկասի Աւետարանում տեղ գտած «*Անառակ Որդու*» առակը խտացուած պատկերն է մարդկային կեանքում կատարուող տարաբնոյթ վիճակների: Առակը մեզ է ներկայանում երեք հիմնական անձերով՝ երկու որդիներով եւ հօրով: Կրտսեր տղան անառակ կեանք է վարում, սակայն Աստուած միջամտում է նրա կեանքին եւ արթնացնում նրա մէջ տուն վերադառնալու գիտակցութիւնը:

«*Նրա ներաշխարհի բացայայտումը*»

Այս առակի հիմնական թեման «*վերադարձն է*»: Վերադարձի պահին է, որ մենք

հանդիպում ենք աւագ որդուն, որն ունենում է որոշակի դժուարութիւններ ըմբռնելու հօր ողորմածութեան մեծութիւնը՝ հանդէպ իր անխոհեմ եւ շռայլութեան մէջ ապրող եղբօրը: Աւագ եղբայրը նախանձով է լցում, երբ տեսնում է այն խրախճանքը, որ կազմակերպուած էր եղբօր պատուին:

Այս առակի ամենից կարեւոր անձը հայրն է: Հօր կերպարի մէջ արտացոլուած է Աստծու ողորմած սէրը: Հայրը ոչ միայն ողջունում է իր կրտսեր որդուն եւ վերականգնում նրա նախկին իրաւունքները, այլ նոյնիսկ՝ ունեցած համազօր սէրը աւագ որդու հանդէպ:

Առակն ընթերցելով՝ մենք հասկանում ենք, որ հայրը իր կրտսեր որդուն շնորհեց կատարեալ ապատութիւն՝ ինչն արգասիքն է իր անկեղծ սիրոյ: Նրա համար ակնյայտ ճշմարտութիւն է, որ տանից հեռու գտնուելու դէպքում որդին կրելու էր բազում դժուարութիւններ: Այդ իսկ պատճառով էլ հայրն իր սիրուց դրդուած խոչնդոտ չհանդիսացաւ իր որդու ետադարձ ճանապարհին: Այս առակի մէջ ամենից կարեւորն Աստծու ցուցաբերած վեհութիւնը, ամբողջական սէրն ու ողորմութիւնն է՝ տաժած իր որդու հանդէպ:

Առակի պատգամը արտացոլում է մեր հաւատքի մեծագոյն խորհուրդը. մենք չէ որ ընտրում ենք Աստծուն, այլ Աստուած է ընտրում մեզ: Հակառակ անառակ որդու սպասումներին, հայրը ողջունեց իրեն եւ վերահաստատեց իր նախկին իրաւունքնե-

ըր ասելով. *«Ես ներում եմ քո յանցանքը»:*  
Դրանից յետոյ նա խրախճանք կազմակերպեց, քանզի իր որդին կորած էր եւ գտնուեց, մահացած էր եւ կենդանացաւ: Այստեղ մենք տեսնում ենք ընտանիքի խաղաղութեան եւ փառքի վերահաստատումը: Որպէս ընտանիքի գլուխ՝ հայրը հաւատարիմ մնաց իր պարտականութիւններին:

Այս առակում հայրը ներկայանում է որպէս ներող եւ մեծահոգի: Նա ցաւում է, երբ տղան գտնուում է իրենից հեռու, ներում է, երբ նա վերադառնում է եւ մեծահոգութիւն ցուցաբերելով շնորհում է՝ այն, ինչ նա ունէր հեռանալուց առաջ:

Մեծ Պահքը մկրտութեան աւապան է, որտեղ մենք վերամկրտում ենք մեր հոգեւոր էութիւնը:

Մեծ Պահքը մեր առջեւ բացում է Աստծուն ընտրելու ճանապարհը:

Մեծ Պահքը մեր առջեւ բացում է մեր քրիստոնէական ինքնութիւնը գտնելու ուղին:

Մեծ Պահքը բաց է անում մեր առջեւ փոխադարձ սիրոյ եւ ներդաշնակութեան ուղին:

Երկուշաբթի, 03. 13. 06

*«Մենք չենք կարող հովուել միւսներին: Ես քեզ խնդրում եմ, որ ուսուցանես ինձ, որպէսզի ինքս էլ ուսուցանեմ նրանց»:*

(Սբ. Օգոստինոս Երանելի)

Այս խօսքերը լոկ բառեր չեն, այլ աղօթքի արտայայտութիւն՝ ապրուած Մբ. Օգոստինոսի կողմից: Այս բառերը նաեւ իմ աղօթքի խօսքերն են: Ես ցանկանում եմ հիւսել այս խօսքերն իմ աղօթքներին այն յոյսով եւ տեսիլքով, որ նրանք իմ մէջ կը պօրացնեն քրիստոնէական կոչումս:

Ես խորապէս հաւատացած եմ, որ իւրաքանչիւր քրիստոնէայ կանչուած է հոգեւոր հովիւ դառնալու իրեն շրջապատող անձանց համար: Մակայն այդ անելու համար անձը պէտք է յարատեւ աղօթքի եւ մշտապէս Աստծու հետ հաղորդակցութեան մէջ լինի: Մենք կարիք ունենք Աստծու միջամտութեան, որպէսզի կարողանանք սովորել եւ ուսուցանել:

Մարդկային կեանքը Աստծու պարգեւն է: Քանզի Աստուած խօսում է նաեւ մեր սրտերի միջով: Այս հանգամանքը մի մարտահրաւէր է մեզ համար, որը պէտք է պատասխանուի մեր կողմից՝ Աստծու խօսքը լսելով եւ այն փոխանցելով:

Երեքշաբթի, 03. 14. 06

*«Մենք միայն Աստծու անօթներն ենք»*

(Եփեա. 6)

Պօղոս Առաքեալի այս խօսքերը շատ իմաստալից են: Մենք բոլորս ընտրուած ենք լինելու Աստծու անօթները, այդ իսկ պատճառով էլ Աստուած որոշում է խօսել մեր սրտերի միջոցով: Նրանք ովքեր ըմբռ-

նում են Պօղոս Առաքելի այս խօսքերի խորքը, անկասկած խոհեմ եւ շրջահայեաց կեանք են վարում:

Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութիւնը պիտի լինի աղօթքի եւ ծովապահուրեան փորձառութիւն, որի շնորհիւ մեր անձերը պիտի վերածուեն Աստծու ճշմարիտ անօթների: Այս ճշմարտութիւնը յստակօրէն արտայայտում է Պօղոս Առաքելի հետեւեալ խօսքերում, թէ Աստծու պատկերը ձեռք է բերում մարդկային էութեան մէջ:

*«Մենք միայն Աստծու անօթներն ենք»*

Չորեքշաբթի, 03. 15. 06

*«Հաւատով խոստովանում եւ երկրպագում եմ Քեզ, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, Անստեղծ եւ անմահ բնութիւն, Արարիչ հրեշտակների եւ մարդկանց եւ բոլոր ստեղծուածների. ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:*

Քրիստոնէայ հաւատացեալը պէտք է հաստատական լինի իր հաւատի մէջ, բայց ամենից առաջ նա պէտք է այդ հաւատը գործականի վերածի: Երբեք էլ բաւարար չէ արտայայտել քրիստոնէական հաւատի վարդապետութիւնները առանց ապրելու այդ հաւատը մեր ամէնօրեայ կեանքում: Մբ. Ներսէս Շնորհալի Հայրապետի աղօթքի այս խօսքերը յետագայ մեկնաբանութեան կարիք չեն զգում: Նրանք իրենց մէջ պարունակում են քրիստոնէական հաւատ-

քի ամբողջ ճշմարտութիւնը եւ ինչն առաւել կարելոր է՝ նրանք որպէս հիմք են ծառայում միւս բոլոր աղօթքներին: Սբ. Ներսէս Շնորհալու անուանած «Հաւատով խոստովանիմ» աղօթքը անկասկած վերածուում է մի նոր աղօթքի, երբ մենք այն ընդունում ենք իբրեւ նոր աւիւն մեր քրիստոնէական կեանքի:

Հինգշաբթի, 03. 16. 06

*«Հաւատով խոստովանում եւ երկրպագում եմ Քեզ անբաժանելի լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն, Արարիչ լոյսի եւ հալածիչ խաւարի: Հալածի՛ր իմ հոգուց խաւարը մեղքերի եւ անգիտութեան. եւ լուսաւորի՛ր միտքն իմ այս ժամին քեզ հաճելի աղօթքներ արտասանել եւ քեզնից ընդունել իմ խնդրանքները, եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:*

Աղօթքի այս խօսքերը սահմանում են Սուրբ Երրորդութեան բնութիւնը, իբրեւ «Արարիչ լոյսի եւ հալածիչ խաւարի»: Այս բառերը նաեւ մեր գիտակցութեանն են հասցնում այն ճշմարտութիւնը, թէ Ամենակարող Աստծու օժանդակութեամբ մեզքը մեր մէջ պարտութեան է մատնւում: Այլ խօսքերով աղօթել նշանակում է ընդունել աստուածային լոյսը: Աղօթքը կանխում է մեզ չարի եւ խաւարի մէջ ընկղմելուց: Մեր առօրեայ կեանքում մենք որպէս ուղենիշ



ունենք երկու ճանապարհ. լոյսի ճանապարհ,  
որն առաջորդում է մեզ դէպի Աստուած եւ՝  
խաւարի ճանապարհ:

Մեծ Պահքի շրջանը ժամանակահատ-  
ուած է մեր հոգեւոր կեանքը մշակելու եւ  
պարգացնելու: «Արարիչ լոյսի եւ հալածիչ  
խաւարի», եւ ինձ յանձնում եմ Քեզ,  
որպէսզի Քո սրբութիւնից իմ մէջ վառեւ  
աստուածային լոյսի քո կայծը, որպէսզի  
եւ կարողանամ հոգեւոր վերածնունդ ապրել:

*«Հալածի՛ր իմ հոգուց խաւարը մեղքերի  
եւ անգիտութեան. եւ լուսաւորի՛ր միտքն  
իմ այս ժամին քեզ հաճելի աղօթքներ  
արտասանել եւ քեզնից ընդունել իմ  
խնդրանքները...»*

Ուրբաթ, 03. 17. 06

*«Հայր երկնաւոր, Աստուած ճշմարիտ,  
որ առաքեցի՛ր Քո սիրելի Որդուն փնրելու  
մոլորեալ ոչխարին, մեղայ երկնքի եւ Քո  
առաջ, եւ ընդունի՛ր ինձ, ինչպէս անառակ  
որդուն եւ հազցրու ինձ առաջին պատմու-  
ճանը որից մերկացայ մեղքի պատճառով.  
եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝  
բազմամեղիս»:*

Որպէս քրիստոնեաներ մենք բոլորս  
պէտք է ընդունենք այն փաստը, որ Անա-  
ռակ Որդու առակը յստակօրէն արտայայ-  
տում է մարդկային էութիւնը: Այն նաեւ  
կարեւորում է հետեւեալ միտքը, թէ մենք  
բոլորս պէտք է ընտրենք դէպի Աստուած

վերադարձի ճանապարհը, որպէսզի վերահաստատենք մեր մէջ Ամենակարողի պատկերը:

*«Հայր երկնաւոր, Աստուած ճշմարիտ, որ առաքեցիր Քո սիրելի Որդուն փնրելու մոլորեալ ոչխարին...»*

Մենք ենք մոլորեալ ոչխարները եւ պէտք է գիտակցենք, որ Աստծու մարմնացեալ Որդին երկնքից իջաւ մեր հոգիները փրկելու համար:

*«Մեղայ երկնքի եւ Քո առաջ, ընդունի՛ր ինձ, ինչպէս անառակ որդուն...»:*

Հաւատաւոր քրիստոնեան, որն ապրում է աղօթքների եւ պահեցողութեան մէջ, նաեւ ձեռք է բերում իր մեղքերը խոստովանելու կարողութիւն եւ քաջ գիտակցում է, որ իր կեանքը չի տարբերում Անառակ Որդու կեանքից:

*«Եւ հազգրու ինձ առաջին պատմութեանը որից մերկացայ մեղքի պատճառով. եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բացմամեղիս»:*

Այդ իսկ պատճառով մեր մեղքերը խոստովանելու անկեղծ ցանկութիւնը արդէն իսկ վերահաստատում է մեզ այն ճանապարհին, որը տանում է դէպի Աստուած: Այստեղ էլ, մենք զգում ենք կորուսեալ մարդու վերածնունդը:

Շաբաթ, 03. 18. 06

*«Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ խոնարհուեցիր հայրական ծոցից եւ*

*մարմին առար սուրբ Կոյս Մարիամից՝ մեր փրկութեան համար. խաչուեցիր, թաղուեցիր եւ յարութիւն առար մեռեալներից եւ համբարձար փառքով Հօր մօտ: Մեղայ երկնքի եւ Քո առջեւ, յիշի՛ր ինձ, ինչպէս աւագակին, երբ գաս Քո Արքայութեամբ. եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բացմամեղիս»:*

Այս աղօթքի ամենակարեւոր մասը արտացոլում է Աստուծու Որդու խոնարհութեան մէջ, որը առաքուել է երկնքից. *«Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ խոնարհուեցիր հայրական ծոցից...»* Աստուծու սէրը արտայայտում է Իր Միածին Որդու Մարդեղացմամբ՝ ով չարչարուեց եւ խաչուեց ու Իր Յարութեան միջից խօսեց մեզ հետ. *«Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը»* (Յովհ. 14:16):

Աղօթքը եւ պահքը խոստովանութեան դրսեւորումներից են: Որքան մենք շարունակում ենք աղօթել եւ պահք պահել, այնքան եւս պարտադրում ենք ինքներս մեզ զօրացնել մեր կոչումը՝ մշտապէս մնալու կապի մէջ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հետ:

Կիրակի, 03. 19. 06

Անիրաւ Տնտեսի Կիրակի

Իմ սիրելի երիտասարդներ, անիրաւ տնտեսի առակը կարդալիս մեր առաջին

տպաւորութիւնը չի կարող դրական լինել, քանի որ տնտեսը, որին վստահուած էր որոշակի պարտաւորութիւն, անարդար վարուեց: Նա չկատարեց իր պարտականութիւնները, երբ վատնեց իր տիրոջ հարստութիւնը եւ նենգափոխեց նոյն տիրոջ պարտապանների գումարային հաշիւները: Այս դէպքում մեզ պարմանալի պիտի թուայ, թէ ինչո՞ւ տէրը գովեց անիրաւ տնտեսին:

Համաձայն Օրմանեան պատրիարքի՝ տէրը խորհորդանշում է Աստծուն, իսկ տնտեսը՝ մարդուն:

Այս աշխարհի շնորհները եւ հարստութիւնները բազմապան են, բայց բոլորն էլ պատկանում են Աստծուն: Մարդը նրանց տէրը չէ, այլ՝ տնտեսը: Աստուած մարդուն վստահել է այս աշխարհի հարստութիւնները, որպէսզի նրանք իմաստուն կերպով օգտագործելով շահոյթ ստանան եւ դրանով իսկ բարենպաստ ապագայ ապահովեն իրենց համար: Մակայն աշխարհի բարիքները ժամանակաւոր են: Ժամանակ կը գայ, որ նրանք կը վերցուեն մեզանից, ինչպէս որ նրանք վերցուեցին տնտեսից: Ուրեմն, տնտեսին ապատելով՝ տէրը նրան ժամանակ է տալիս օգտագործելու իր բարիքները՝ շահոյթ ստանալու համար:

Անիրաւ տնտեսի առակը մեզ սովորեցնում է, որ բոլորս հաշուետու ենք, թէ՛ այս եւ, թէ՛ հանդերձեալ աշխարհների համար: Մեզանից իւրաքանչիւրին անկասկած պատասխանատուութիւն է տրուած

մեր ամբողջ կեանքի ընթացքում, որը մենք պէտք է ջանասիրաբար կատարենք:

Եւ ինչպէս անիրաւ տնտեսը, այնպէս էլ մենք մի օր պիտի սայթաքենք, սակայն բարեգութ Սատուած պիտի շարունակի մեզ պարգեւել իր շնորհները, որպէսզի կարողանանք վերադառնալ դէպի Նա:

Երկուշաբթի, 03. 20. 06

*«Հոգի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ իջար Յորդանան (գետ) եւ վերնատուն, եւ լուսաւորեցիր ինձ մկրտութեամբ սուրբ Աւագանի, մեղայ երկնքի եւ Քո առջեւ, մաքրի՛ր ինձ վերստին, աստուածային Քո հրով, ինչպէս առաքեալներին՝ հրեղէն լեզուներով. եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:*

Սուրբ Հոգին ներգործում է մեր հոգիներից ներս: Շատ կարեւոր է սակայն մեր մէջ տեսնել Սուրբ Հոգու պարգեւած շնորհները:

*«Հոգի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ իջար Յորդանան (գետ) եւ վերնատուն, եւ լուսաւորեցեր ինձ մկրտութեամբ սուրբ Աւագանի»:* Պօղոս Առաքեալի Հոռմէացիներին ուղղուած թղթում մենք հանդիպում ենք այն պատգամին, որ Սուրբ Հոգին հարստացնում եւ նորոգում է մեզ իր տարաբնոյթ զգեստաւորումներով: *«Բայց այժմ բեռնաթափուեցինք օրէնքից, քանզի մեռա՛նք այն քանի նկատմամբ, որով բռնուած էինք,*

*որպէսզի ծառայենք Հոգու նորոգութեամբ  
եւ ո՛չ գրուածքի հնութեամբ» (Հռոմ. 7:6):*

*«Մաքրի՛ր ինձ վերստին, աստուածային  
Քո հրով, ինչպէս առաքեալներին՝ հրեղէն  
լեզուներով»*

Եկէք աղօթքի այս խօսքերը դարձնենք  
մեր սրտի խօսքերը:

Կեանքն արտայայտում է երեք հիմ-  
նական չափերով.

1) Կեանքը հոգեւոր ճանապարհորդու-  
թիւն է Աստծուն փնտռելու:

2) Կեանքը Աստծու պարգէն է, որն մեզ  
է շնորհուած այն ներդնելու պայմանով:

3) Կեանքը սիրոյ ճանապարհորդու-  
թիւն է տարածուած մեր բոլորի սրտերում:

Երեքշաբթի, 03. 21. 06

*«Անստեղծ բնութիւն, մեղայ Քեզ՝ մտ-  
քերով, հոգով եւ մարմնով, մի յիշիր մեղքերն  
իմ նախկին Քո սուրբ անուան համար. եւ  
ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բազ-  
մամեղիս»:*

Խոստովանութիւնը անհրաժեշտութիւն  
է քրիստոնէայի կեանքում: Մեծ Պահքը մի  
իրայատուկ պարգէն է, որը հնարաւորութիւն  
է տալիս խոստովանուելու մեր մեղքերը:  
Ներսէս Շնորհալի հայրապետի այս աղօթք-  
ները օգնում են մեզ ըմբռնելու այն բա-  
ցարձակ ճշմարտութիւնը, որ մեզանից

իւրաքանչիւրը կարող է սուրբի վերածուել իր աղօթքների խոստովանութեան շնորհիւ: Այս կապակցութեամբ ես կը ցանկանայի նաեւ մէջբերել Գարեգին Ա. Կաթողիկոսի հետեւեալ խօսքերը. «Մրբերը նրանք չեն, ովքեր մնում են առանձնութեան, անգործութեան եւ անարդիւնաւէտութեան մէջ եւ իրենց կեանքը վերածում են ամայի մի վիճակի, ինչպէս մի անապատի, որի մէջ ջրամբար չկայ, քանի որ այնտեղ ջուր չի գտնուում»:

Այդ իսկ պատճառով, - ձեր մեղքերը միմեանց խոստովանեցէք եւ միմեանց համար աղօթք արէք, որպէսզի բժշկուենք, քանզի արդարի աղօթքը շատ ազդեցիկ է եւ օգնում է (Յակոբոս 5:16)»:

Չորեքշաբթի, 03. 22. 06

«Գաղտնիքներ քննող, մեղայ Քեզ կամայ եւ ակամայ, գիտակցաբար եւ անգիտակցաբար, թողութիւն շնորհի՛ր մեղաւորիս, քանզի ծնունդից սուրբ Աւագանի մինչեւ այսօր մեղանչել եմ Քո Աստուծութեան առաջ. իմ զգայարաններով եւ մարմնիս բոլոր անդամներով. եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:

Եկէք այս աղօթքը վերածենք մեր սրտինը: Աստուած «գաղտնիքներ քննող է» եւ երբ Աստուած թափանցում է մեր հոգեւոր կեանքից ներս մենք զգում ենք նոր կեանքի մեր արշալոյսը: Մենք վստահում

ենք միայն Աստծուն եւ միայն Աստծով է, որ հեռացնում ենք մեզ մեղաւոր կեանքից եւ ինքնազննում կատարում: Մեր հոգու եւ մտքի վիճակը պէտք է արտայայտուի նաեւ մեր վարուելակերպի մէջ՝ մասնաւորաբար մեզ շրջապատող անձանց նկատմամբ: Մեր անձերը փոխակերպում են միայն այն դէպքում, երբ մենք Աստծու ներկայութեամբ խոնարհեցնում ենք ինքներս մեզ:

Հինգշաբթի, 03. 23. 06

*«Ամենողորմ Տէր, ողորմիր բոլոր քեզ հաւատացողներին, իւրայիններին եւ օտարներին, ողջերին եւ մեռածներին, թողութիւն շնորհիր թշնամիներիս եւ ատողներիս իմ դէմ գործած յանցանքների համար եւ նրանց ետ դարձրու չարութիւններից, որ ունեն իմ դէմ, որ արժանանան Քո ողորմութեանը, եւ ողորմիր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:*

Աստծու հանդէպ երկիւղը մեզ պինում է կեանքի բոլոր փորձութիւնների դէմ: Մբ. Ներսէս Շնորհալու այս աղօթքները կարիք չեն պգում յետագայ մեկնութիւնների: Աղօթքի առաջին հատուածը անկեղծ աղերսանք է ուղղուած Ամենակարողին, որպէսզի Նա պարզարի մեր հոգեւոր աշխարհը իմաստութեամբ եւ աստուածային երկիւղով: Իսկ երկրորդ հատուածը խնդրանք է Աստծուն, որ Նա ուղղի մեր մարմնի անդամները առաքինի կեանքի:



Եկէք ուրեմն Աւետարանի պատգամները մարմնաւորենք մեր սրտերում, քանզի այնտեղ պիտի պզանք մեր նոր կեանքի սկընաւորութիւնը:

Ուրբաթ, 03. 24. 06

*«Հուր կենդանի Քրիստոս, երկրում տարածած Քո սիրոյ հուրը բորբոքիք իմ մէջ, որպէսզի այրի ախար իմ հոգու. եւ սրբի իմ խղճմտանքը. եւ մաքրիք մեղքերն իմ մարմնի, եւ վառի Քո գիտութեան լոյսը իմ սրտում. եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:*

Սուրբ Ներսէս Շնորհալու աղօթքներից մասնաւորաբար իմ սրտին շատ հարապատ է այս մէկը: Ամէն անգամ այն կարդալիս ես պզում եմ Նրա պօրութիւնը: Յիսուս ապրող հուր է, որ մտնում է մեր հոգիներից ներս եւ մաքրում ամէն անմաքրութիւն, որոնք առկայ են այնտեղ: Մեր ժամանակներում, մարդկութիւնը խիստ կարիք ունի հոգեւոր վերածնութեան: Եւ շատ կարեւոր է, որ մենք սնենք մեր հոգիները մեր հայրերի աղօթքներով, դրանով իսկ բացառելով մեր մէջ աստուածային անմար կայծը:

Շաբաթ, 03. 25. 06

*«Հօր իմաստութիւն՝ Յիսուս, տո՛ւր ինձ իմաստութիւն, որ ամէն ծամ Քո առաջ խոր-*

*հեմ, խօսեմ եւ գործեմ բարին եւ փրկիր  
ինձ չար խոհերից, խօսքերից եւ գործերից.  
եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝  
բազմամեղիս»:*

Քրիստոսն արմատն է մեր իմաստու-  
թեան: Աղօթքների միջոցով մենք դիմում  
ենք Նրան այն ակնկալիքով, որ Տէրը մշտա-  
պէս ներկայ կը լինի մեր հոգիներում:  
Յիրաւի, այս է ամէնից կարեւոր իրակա-  
նութիւնը. թոյլ տալ, որ Յիսուս մնայուն  
արմատը լինի մեր իմաստութեան:

*«Հօր իմաստութիւն՝ Յիսուս, տո՛ւր ինձ  
իմաստութիւն, որ ամէն ժամ Քո առաջ  
խորհեմ, խօսեմ եւ գործեմ բարին...»:*

Եկէք ամէն առաւօտ արթնացնենք մեր  
հոգեւոր կեանքը այս հիասքանչ աղօթքով:  
Մենք բոլորս տարբեր վրադումների տէր  
անձինք ենք, սակայն բոլորս կարիք ունենք  
Քրիստոսի իմաստութեան եւ առաջնորդու-  
թեան: Ապրել Քրիստոս Յիսուսի հետ նշա-  
նակում է ապրել քրիստոնէական բարոյա-  
կանութեամբ յագեցած կեանքով:

Կիրակի, 03. 26. 06

Դատաւորի Կիրակի

*«Մարդ պէտք է աղօթի եւ չճանձրանայ»:*

Այս խօսքերը մեր Տէր Յիսուս Քրիս-  
տոսի խօսքերն են՝ ուղղուած բոլորիս:  
Սրանք մեր Փրկչի ապրած խօսքերն են:

Նրա կեանքը աղօթաբոյր հոգու ճշմարիտ օրինակ է: Աղօթքի կարեւորութիւնը մարդ անհատի կեանքում կարեւորելու համար, Նա մեզ պատմեց այրի կնոջ եւ անիրաւ դատաւորի առակը, որն արձանագրուած է Ղուկասի Աւետարանի 18-րդ գլխում: Ուշադիր կարդալով այն, մենք այնտեղ գտնում ենք Յիսուսի պատգամը՝ արտայայտուած այրի կնոջ կեանքում. *«Մարդ մշտապէս պէտք է աղօթի եւ երբեք չձանձրանայ»*: Առակը օգնում է մեզ վերանորոգելու մեր քրիստոնէական հաւատը եւ ոգեւորում է բոլորիս հաստատ մնալու մեր աղօթքներում:

Ալեքսանդր Շմեմանի խօսքերի համաձայն. *«Պահեցողութիւնը եկեղեցու կեանքում արքայութիւն տանող ուխտագնացութիւնն է: Եւ երբ մենք բազմապատկում ենք մեր հոգեւոր ջանքերը, առաւել կարիք ենք պզում իբրեւ հոգեւոր գոյամիջոց ունենալ անդադար հաղորդութիւնը Նրա հետ: Ինչպէս հրեաների նախնիները, մենք նոյնպէս փնտռում ենք աւետեաց այն երկիրը՝ Աստծու արքայութիւնը, որն ամբողջութեամբ յայտնուեց Յիսուսի աստուածային Յարութեամբ»*: Ուրեմն համաձայն արժանապատիւ Շմեմանի *«Հաղորդութիւնը մանանայ է, որը մեզ կենդանի է պահում Մեծ Պահքի անապատի միջով անցնելու ընթացքում»*:

Այրին ոգեշնչում է մեզ իր հետեւողական աղօթքներով, որոնք կրկնուեցին առանց ձանձրոյթի: Մեզանից իւրաքանչիւրը յուսահատութեան պահեր է ունենում, նոյնիսկ իր աղօթաբոյր կեանքում, սակայն

նոյն այս այրու օրինակը մեզ ցոյց է տալիս, որ նրանք, ովքեր անդադար, անվերջ եւ առանց ձանձրանալու աղօթում են. կարողանում են յաղթահարել կեանքի ամէնօրեայ դժուարութիւնները:

Երկուշաբթի, 03. 23. 06

*«Բարիք կամեցող, ո՛վ Տէր կամարար, մի՛ թող ինձ անձիս կամքով գնալ, այլ առաջնորդիր ինձ՝ լինել միշտ ըստ Քո բարեւէր կամքի, եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:*

Սուրբ Ներսէս Շնորհալու այս աղօթքը մեզ յիշեցնում է մի պարզ ճշմարտութիւն. շատ յաճախ մենք վստահում ենք մեր կարողութիւններին, եւ մոռանում, որ կանչուած ենք իրականացնելու Աստծու կամքը: Այս աղօթքն ունի մաքրագործող զօրութիւն, որը մաքրում է մեր սրտերն ու հոգիները, եւ հնարաւորութիւն տալիս մեզ զգալու Աստծու ներգործումը մեր հոգիներից ներս: Երեքշաբթի, 03. 28. 06

*«Արքայ երկնաւոր, տո՛ւր ինձ քո արքայութիւնը, որ խոստացար քո սիրելիներին, եւ զօրացրու սիրտս, որ մեղքերն առեմ, եւ սիրեմ լոկ քեզ, ու կամքդ կատարեմ. եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:*

*«Արքայ երկնաւոր, տո՛ւր ինձ քո արքայութիւնը, որ խոստացար քո սիրելիներին ...»:* Որքան մօտ գտնուենք մենք Աստծուն, այնքան կը հեռանանք մեղքից: Այս աղօթքը արտացոլում է սուրբ Հայրապետի ներքին վիճակը, որն փափաքում է միանալ Աստծուն եւ ամբողջութեամբ յանձնուում է Ամենակարողի կամքին: *«Եւ պօրացրու սիրտս, որ մեղքերն ատեմ, եւ սիրեմ լոկ քեզ, ու կամքդ կատարեմ...»:*

Քրիստոնէութեան առանձնայատկութիւնը ամբողջանում է միայն այն ժամանակ, երբ մենք իրագործում ենք Աստծու կամքը: Պահքը մի իրայատուկ շրջան է, որի ընթացքում մենք առաւելաբար կենտրոնացնում ենք մեր ուշադրութիւնը Աստծու խօսքի վրայ:

Չորեքշաբթի, 03. 29. 06

*«Խնամող արարածների, խաչիդ նշանով պահպանի՛ր հոգիս եւ մարմինս մեղքերի պատրանքներից, դեւերի փորձութիւններից, անիրաւ մարդկանցից եւ հոգու ու մարմնի բոլոր վտանգներից, եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:*

Սբ. Ներսէս Շնորհալու աղօթքները ընթերցելիս, ես յստակօրէն հասկանում եմ, որ Աստուած եղել է իր կեանքի նպատակակէտը: Շնորհալին իր անձը ամբողջութեամբ նուիրելով Աստծուն՝ կարողացել է մեղքն իրենից հեռացնել: *«Խաչիդ նշա-*

*նով պահպանի՛ր հոգիս եւ մարմինս մեղքերի պատրանքներից, դեւերի փորձութիւններից, անիրաւ մարդկանցից եւ հոգու եւ մարմնի բոլոր վտանգներից...»* Խաչը պէտք է լինի մեր հոգեկանութեան նշանասիւնը, քանզի ամէն անգամ, երկրպագելով խաչին, մենք նրա միջոցով նաեւ երկրպագում ենք մեր Տէր Յիսուս Քրիստոսին: Խաչի Վորութեամբ մենք տեսնում ենք Քրիստոսին, որ Իր անձը զոհաբերեց համայն մարդկութեան համար: Այդ է պատճառը, որ խաչը մեզ համար խորհրդանշում է նոր կեանքի սկիզբը: Որպէս քրիստոնէաներ, մեզ համար նոր կեանքը սկիզբ է առնում, երբ խաչի նշանով կարողանում ենք ապատագրել մեր անձերը, հոգիներն ու մարմինները մեղքից, փորձութիւններից եւ անարդար գործերից:

Հինգշաբթի, 03. 30. 06

*«Բոլորի պահպան Քրիստոս. թող Քո Աջը հովանի լինի ինձ վրայ. գիշեր եւ ցերեկ, տանը նստելիս, ճամբա գնալիս, քնած թէ արթուն, որպէսզի երբեք չսասանուեմ. եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:*

Մանկութիւնիցս ի վեր, ես անդադար արտասանել եմ Սբ. Ներսէս Շնորհալու այս խօսքերը: Այսօր, իմ մտքերը կիսելով ձեզ հետ, ես խոր հոգեկան բաւարարութեամբ հաւաստիացնում եմ ձեզ, որ

այս աղօթքը դարձել է իմ էութիւնն ու հոգեւոր կեանքը լուսաւորող իրականութիւն, ինչպիսիւն հանդիսանում է իւրը՝ լապտերի համար: Որպէս քրիստոնէաներ, մենք կանչուած ենք ապրելու Քրիստոսի հետ: Այն իրականութիւն է դառնում, երբ մենք ապրում ենք աղօթքի կեանքով եւ թոյլ ենք տալիս, որ Քրիստոս օր ու գիշեր մեզ պահպանի: Յիրաւի իմ սրտի փափաքն է, որ բոլոր ծնողները մշակեն ու հարստացնեն իրենց երեխաների հոգիները նոյն այս աղօթքով: Աղօթքը մեր կեանքերում յարատեւող իրականութիւն պիտի լինի, ինչպէս Յիսուս Ինքը պատուիրեց. *«Մշտապէս աղօթեցէք եւ մի ձանձրացէք»:*

Ուրբաթ, 03. 31. 06

*«Աստուած իմ, որ բացում ես ձեռքդ եւ լցնում բոլոր արարածներին Քո ողորմութեամբ, Քեզ եմ վստահում անձն իմ Դու հոգա՛ եւ պատրաստիր հոգուս եւ մարմնիս կարիքները, այսուհետեւ մինչեւ յաւիտեան. եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:*

Սբ. Ներսէս Շնորհալու այս մասնաւոր աղօթքը յաճախ հանդիսացել է իմ հոգեշունչ մտորումների ու պատգամների առարկան, մասնաւորաբար նախորդ պահքերի շրջանում: Այս աղօթքի միջոցով Շնորհալի Հայրապետը մեզ է փոխանցում մի պարզ ճշմարտութիւն. աղօթքի միջոցով մենք մեզ

յանձնում ենք Ամենակարողին: Այլ խօսքերով Աստծուն աղօթելով մենք ամբողջութեամբ վստահում ենք Նրան, եւ այդ անելով վերածում ենք Իր աստուածային սիրոյ, խաղաղութեան ու երկնային պարգեւներն ընդունողների:

Շարք, 04. 01. 06

*«Մոլորուածներին դու դարձի բերող, դարձրու ինձ իմ չար սովորութիւններից բարի սովորութեան, իմ հոգում բեւեռիք սուկալի օրը մահուան, երկիւղը գեհենի եւ սէրը արքայութեան, որպէսզի զոջամ մեղքերս եւ գործեմ արդարութիւն, եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:*

Լինում են պահեր, երբ մեզանից իւրաքանչիւրը մոլորում է մեր ամէնօրեայ կեանքում: Բայց եւ այնպէս մեզ շնորհուած է աստուածային առաջնորդութիւն, ինչն աղօթքի միջոցով մեր մէջ արթնացնում է դէպի Աստուած վերադարձի գիտակցութիւնը:

Աղօթքը յիրաւի մեծ կարեւորութիւն ունի: Աղօթելիս մենք առանձնանում ենք, սակայն այդ առանձնութիւնը երբեք էլ միայնութիւն չէ, քանզի Աստուած մեզ հետ է եւ մեր մէջ արթնացնելով խոստովանութեան զօրութիւնն ու կարողութիւնը առաջնորդում է մեզ դէպի առաքինի կեանք: Այն անձինք, ովքեր կարողանում են խոստովանել եւ իրենց սրտերը բաց անել, նրանք են, ովքեր գնում են Աստծուն ընդ-



առաջ եւ իրենց ինքնութիւնը ինքնամարման են առաջնորդում: Այս ընթացքը շօշափելի է դառնում միայն աղօթանուէր կեանքի դէպքում:

Կիրակի, 04. 02. 06

### Գալստեան Կիրակի

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը հանդիսանում է քրիստոնէական հաւատքի առանցքը: Եթէ այս ճշմարտութիւնը դուրս հանենք մեր հաւատամքից, մեր ամբողջ քրիստոնէական հաւատքն ու վարդապետութիւնը կը փլուզուի:

*«Լոյս ճշմարիտ՝ Քրիստոս, արժանացրո՛ւ հոգիս այն կանչի օրը ուրախութեամբ տեսնելու փառքը Քո լոյսի եւ արդարների օթեւանի մէջ հանգչել բարեյոյս, մինչեւ Քո գալստեան մեծ օրը...»:*

Սբ. Ներսէս Շնորհալու այս աղօթքի մէջ մէկ անգամ եւս յիշեցում ենք Յիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստեան մասին: Յիսուս Ինքը յայտնեց մեզ այս մեծ ճշմարտութիւնը: Անհրաժեշտ է հասկանալ սակայն, որ թէ՛ Յիսուսի Երկրորդ Գալուստը եւ թէ՛ Մարդեղացումը մտքի համար անըմբռնելի խորհուրդներ են եւ նրանք կարելի է հասկանալ եւ ընդունել միայն հաւատի շնորհիւ: Մարդեղացումը վերափոխեց ամբողջ մարդկութեան կեանքը, ինչ իսօք նոյնը վերաբերում է նաեւ մեր Տիրոջ Երկրորդ Գալուստին: Որպէս քրիս-

տոնեաներ, մենք խոր հաւատով եւ մեծ  
ակնկալիքներով սպասում ենք Տիրոջ  
Երկրորդ Գալստեան: Այս հաւատքը օգնում  
է աստուածահաճոյ կեանք ապրել եւ  
գիտակցել, որ որպէս Աստուծոյ մկրտուած  
պաւակներ, ստացել ենք մեր կեանքում  
Քրիստոսի ներկայութիւնը զգալու շնորհ-  
ները եւ պարգեւները: Ուղղափառ դաւա-  
նանք ունեցող Եկեղեցիները երբեւիցէ չեն  
փորձել Յիսուսի Երկրորդ Գալստեան կա-  
պակցութեամբ որոշակի ժամանակ սահ-  
մանել, այն համոզումով, որ այդ անելով  
կը խեղաթիրեն քրիստոնէական ճշմարիտ  
վարդապետութիւնը: Քրիստոս վեր է բոլոր  
ժամանակներից եւ տարածութիւններից,  
Նա անմահ էութիւն է, որ բնակւում է մեր  
սրտերում: Այդ իսկ պատճառով էլ Յիսուսի  
ներկայութիւնը շօշափելի իրականութիւն է  
մեր կեանքում, ինչը կարող ենք զգալ եւ  
ապրել աղօթքների ու ծոմապահութեան  
միջոցով:

Երկուշաբթի, 04. 03. 06

*«Աղբիւր անմահութեան, բխեցրու զղջ-  
ման արցուններն իմ սրտից, ինչպէս  
պոռնիկից, որպէսզի լուամ մեղքերն իմ  
անձի, նախքան հեռանալն իմ այս աշ-  
խարհից, եւ ողորմի՛ր քո արարածներին եւ  
ինձ՝ բազմամեղիս»:*

Սբ. Ներսէս Շնորհալու բոլոր աղօթք-  
ներում մենք տեսնում ենք մարդկութեան

պատկերը, մարդկային հոգու պատկերը: Մէկ խօսքով մենք տեսնում ենք ամբողջ աշխարհի պատկերը, ամփոփուած մարդու մէջ, որը մեղաւոր կեանքից ուժասպառ եղած աղերսում է Աստծուն. *«Բխեցրու զղջման արցունքներն իմ սրտից...»*:

Իսկ ի՞նչ է կատարում, երբ մենք բացում ենք մեր սրտերը եւ խոստովանութիւն ենք կատարում Աստծուն: Մենք պարզապէս յանձնում ենք մեր կեանքը Աստծու ձեռքը եւ վճռում ենք առաջորդուել Նրան եւ մարդկութեանը հաճելի ճանապարհով: Սակայն չպէտք է մոռանանք նաեւ, որ այս կարեւոր վճիռը իր արտայայտութիւնը պիտի գտնի մարդկանց հետ մեր ունեցած փոխադարձ յարաբերութեան մէջ:

Երեքշաբթի, 04. 04. 06

*«Պարգեւիչ ողորմութեան, պարգեւի՛ր ինձ ուղղափառ հաւատքով եւ բարի գործով եւ Քո սուրբ Մարմնի եւ արեան հաղորդութեամբ գալ զէպի Քեզ. եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:*

Աստուած բոլոր բարիքների արմատն է եւ մեր բոլոր աղօթքները ուղղուած են Նրան: Ինչպէս սակայն Սբ. Ներսէս Շնորհալին է մեզ հաղորդում, Աստծու հետ մեր յարաբերութիւնները պայմանաւորուած են որոշ նախապատրաստութեամբ: Այդ նախապատրաստութեան ընթացքում մենք հնարաւորութիւն ենք ունենում մեր հա-

ւատքը կշռադատել թէ ինչպէս է այն արտացոլում մեր առօրեայ կեանքում՝ մասնաւորաբար մեր խօսքերում եւ գործերում: Միայն նրանից յետոյ է, որ մենք թոյլտուութիւն ենք ստանում Աստծուն մօտենալ եւ նրանից ողորմութիւն խնդրել: Մենք բոլորս քաջատեղեակ ենք, որ Եկեղեցու մեծագոյն հայրերն ու աստուածաբաններն անգամ իրենց հոգեւոր կեանքում հանդիպել են խոչընդոտների:

Իր նախնական վիճակում աղօթքը բաների արտասանութիւն է հանդիսանում: Չարգացման ընթացքում վերածուում է մեր մտքի տրամաբանութեան եւ վերջապէս այն իր լրումին է հասնում, երբ վերածուում է սրտաբուխ շարժումի: Յիրաւի, այդ պահին է, որ մենք պզուտ եւ ապրում ենք Աստծու ներկայութիւնը, որպէս կենսաբուխ մի աղբիւրի:

Չորեքշաբթի, 04. 05. 06

*«Բարերար Տէր, ինձ բարի հրեշտակին յանձնիր, հոգիս քաղցրութեամբ աւանդելու համար, եւ անխոռով անցկացնելու շարութիւնից դեւերի, որոնք գտնւում են երկնքի ներքոյ, եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:*

Սբ. Ներսէս Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղօթքը կարելի է համարել դէպի Աստուած տանող աստիճանի քայլերից մէկը: Որքան շատ ենք այն ընթերցում,

այնքան աւելի ենք մօտենում Աստծուն: Որքան շատ ենք այն դարձնում մեր սրտի աղօթքը, այնքան աւելի շօշափելի է դառնում Աստծու ներկայութիւնը մեր կեանքում: Խօսելով Աստծու հետ հանդիպման մասին, պէտք է հասկանանք այն պարզ ճշմարտութիւնը, որ Աստուած մշտապէս առկայ է մեր հոգու մէջ: Եւ միայն նրանք չենք կարողանում զգալ Աստծու ներկայութիւնը, ովքեր թուլացրել են իրենց հաւատը կամ հեռացել Աստծուց: Այդ պատճառով էլ աղօթքը կարելի է համարել մի փոքրիկ ճանապարհորդութիւն դէպի Աստուած, որը բացում է մեր սրտի աչքերը՝ տեսնելու Աստծուն եւ քայլելու Նրա հետ:

Հինգշաբթի, 04. 06. 06

*«Լոյս ճշմարիտ՝ Քրիստոս, արժանացրո՛ւ հոգիս այն կանչի օրը ուրախութեամբ տեսնելու փառքը Քո լոյսի եւ արդարների թեւանի մէջ հանգչել բարեյոյս, մինչեւ Քո գալստեան մեծ օրը, եւ ողորմի՛ր քո արարածներին եւ ինձ՝ բարձրամեղիս»:*

Քրիստոս է ճշմարիտ լոյսը: Մենք բոլորս էլ ապրել ենք մեր կեանքի առաջին պահերը, երբ բացելով մեր աչքերը ահանատես ենք եղել այս աշխարհի գեղեցկութեանն ու լոյսին, որոնք, ինչ խօսք, տրուած են վայելելու համար: Լոյսի ակունքը Աստուած է միայն, սակայն այսօրուայ մարդկութիւնն անարգում է այս ճշմար-

տութիւնը: Մերօրեայ գիտութիւնը աշխարհի արարչագործութեան կապակցութեամբ որդեգրել է մի նոր եւ բոլորովին տարբեր մտակեցում: Որպէս քրիստոնէաներ, մենք Աստծուն տեսնում ենք որպէս միակ եւ բացարձակ պատճառ ամբողջ արարչագործութեան: Սբ. Ներսէս Շնորհալու միտքը յստակ է. միայն մեր քրիստոնէական հաւատքի զօրութեամբ մենք կարող ենք կապուել Նրա հետ եւ լիցքաւորուել Նրա աստուածային ներկայութիւնից:

Ուրբաթ, 04. 07. 06

*«Արդար դատաւոր, երբ Հօր փառքով գաս դատելու ողջերին եւ մեռածներին. Բո ծառայի հետ դատի մի՛ մտիր, այլ փրկիր ինձ յաւիտենական հրից եւ լսելի արա ինձ արդարների երանաւէտ կանչն դէպի երկնային արքայութիւնդ. եւ ողորմիր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս»:*

Վերջին դատաստանը բոլորիս համար է նախապարաստուած: Նրա ժամանակ արդարները իրենց վարձը պիտի ստանան, իսկ անարդարներն ու չարերը պիտի պատժուեն: Սբ. Ներսէս Շնորհալու այս աղօթքը յիշեցնում է մեզ, որ բոլորս էլ պատասխանատու ենք մեր ապրած կեանքի համար: Կարծում եմ՝ բոլորս էլ յիշում ենք անարդար դատաւորի կերպարը, որ Յիսուս պատմեց Իր առակներից մէկում: Չնայած, որ նա դատապարտուեց, սակայն

կանչուեց վերափոխելու իր ապրած կեանքը եւ Աստծուն ընդունելու որպէս միակ ճանապարհ:

Շաբաթ, 04. 08. 06

Ամենակարող Աստծու ներկայութիւնը արտայայտուում է արարչագործութեան գեղեցկութեան մէջ:

Ամենակարող Աստծու ներկայութիւնը արտայայտուում է մարդկանց կեանքում:

Այս ամենից առաւել, սակայն Ամենակարող Աստծու ներկայութիւնը արտայայտուում է Աստուածորդու Մարդեղացման Խորհուրդի մէջ:

Աղօթելիս մենք կենտրոնանում ենք երեք հիմնական մտքերի վրայ:

ա) Արարչագործութեան գեղեցկութեան վրայ, որում իբրեւ Աստծու ձեռագրի արտայայտութիւն տեսնում ենք ստեղծագործութեան ներդաշնակութիւնն ու աշխարհի կատարելութիւնը: Աստծու փառքը արարչագործութեան մէջ է երեւում եւ նոյն այդ արարչագործութեան մէջ է, որ Աստծուն ենք հանդիպում:

բ) Մեր անձնական կեանքում, որտեղ մենք տեսնում ու համոզուում ենք, որ մարդը ստեղծուած է՝ Աստծու կողմից եւ կրում է Նրա պատկերը: Մարդուն տրուած են բազմաթիւ շնորհներ Աստծու ստեղծագործութիւնը վայելելու համար: Յիրաւի, Աստուած մեզ հետ խօսում է մարդկանց սրտերի

միջոցով, մասնաւորաբար այն անձանց, ովքեր աստուածահաճոյ կեանք են ապրում:

գ) Իսկ ամենակարեւորը՝ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի կեանքի վրայ, որի մասին էլ խորհելիս մենք տեսնում ենք աստուածային մեծագոյն սիրոյ արտայայտութիւնը՝ ուղղուած մարդկանց հոգիների փրկութեանը:

04. 09. 06

### ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ծաղկազարդը Աւագ Շաբաթուայ նախաշէմն է: Քրիստոնէական Եկեղեցում Աւագ Շաբաթը ընկալում է որպէս ամենից հոգեպարար եւ ոգեւորիչ շրջանը, քանզի այն մեզ առաջնորդում է դէպի Աստուած: Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի յաղթական մուտքը Սուրբ Երուսաղէմ, մի նոր Ծաղկազարդ է վերարթնացնում մեր մէջ, որի ընթացքում աշխարհի Փրկիչն ու տէրը մտնում է մեր հոգիներից ներս: Դիմաւորելով Քրիստոսին, մենք խնամում ենք մեր հոգու մէջ արմատացած աստուածային զօրութիւնը:

Իսկ ինչպէս կարելի է մեր հոգիներից ներս ընդունել Երուսաղէմ Սուրբ քաղաքից ձառագայթող ցնծութիւնը:

Իմ պատգամը շատ պարզ է: Գնացէ՛ք եկեղեցի, հետեւեցէ՛ք երեխաների կազմած թափօրին, ուշադրութիւն դարձրէ՛ք նրանց աղօթքներին եւ լցրէ՛ք ձեր սրտերն ու



հոգիները նրանց գուարթ ներկայութեամբ: Այդ անելով, դուք ձեր հոգիների մէջ կը վերականգնէք Քրիստոսի ներկայութիւնը եւ ձեր սրտերը կ'ուղղէք Երուսաղէմ Սուրբ քաղաքին:

## ԱԻԱԳ ՇԱԲԱԹ

Ծաղկազարդին յաջորդող Շաբաթը Քրիստոնէական Եկեղեցու օրացոյցի մէջ Աւագ Շաբաթ է անուանում: Այս շրջանում Քրիստոսի աշխարհային կեանքին վերաբերող շատ կարեւոր իրադարձութիւններ են կատարուել. Վերջին Ընթրիքը, Ոսնլուան, Քրիստոսի չարչարանքները, Խաչելութիւնը, Թաղումը եւ այս ամենից առաւել՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի յաղթական եւ փառաւոր Յարութիւնն, ինչն էլ հանդիսացաւ համայն մարդկութեան նոր արշալոյսը:

Այս իրադարձութիւնների մէջ մենք տեսնում ենք Աստուածորդու խոնարհութիւնը: Յիսուս խոնարհեցրեց Իր անձը, որպէսզի մեզ համար պատրաստի նոր կեանքի ճանապարհը: Աւագ Շաբաթը քրիստոնէութեան ամենից հոգեպարար ժամանակահատուածն է, քանզի այս շրջանում է, որ մենք վերածում ենք Յիսուսի տառապանքները կիսողների եւ մեր հոգիներից ներս ստանում Նրա օրհնաբեր Յարութիւնը:

Վստահութեամբ կարելի է ասել, որ Հայ Առաքելական Եկեղեցին եւ իր հաւա-

տաւոր զաւակները սկզբից ի վեր ապրել են քրիստոսանման կեանքով:

Աւագ Շաբաթը մէկ անգամ եւս պարտաւորեցնում է մեզ ամուր պահել մեր նախահայրերի հաւատքը:

Ամբողջ Աստուածաշունչը խտացուած է Ոսնրուայի արարողակարգի մէջ, որի էութիւնը մեկնում է մեզ Քրիստոսի հետեւեալ պատգամը. *«Եւ եկայ, որպէսզի կեանք ունենան եւ առաւել եւս ունենան»* (Յովհ. 10:10):

Իմ սիրեցեալ հաւատացեալներ, եկէք այս Մեծ Պահոց շրջանում աղօթենք մէկս միւսի համար, ամբացնենք մեր քրիստոնէական հաւատը եւ նորոգենք մեր կոչումը՝ ծառայելու Աստծուն ու մարդկութեանը: Այսու, ձեզ եմ ներկայացնում մի քանի խորհրդածութիւններ, որպէսզի նրանք այս Մեծ Պահոց շրջանում ձեզ ծառայեն իբրեւ հոգեւոր սնունդ:

Որպէս մարդ անհատներ, մենք շատ յաճախ ձախողուում ենք ապրել մեր քրիստոնէական արժէքներով: Եւ ամէն անգամ ձախողուելիս մենք մի փոքրիկ «մահ», ցաւ կամ վիշտ ենք պատճառում մեզ կամ դիմացիներին:

Աստուած մեր կեանքի վերջին նաւահանգիստն է: Ամէն անգամ, երբ մենք Աստծուն եւ մարդկութեանը անհաճոյ գործեր ենք կատարում, կարծես մի «փոքրիկ մահ» ենք ապրում մեր հոգիներում: Իսկ ինչպէ՞ս կարելի է սահմանել այդ «փոքրիկ մահը»: Այն բեկրանքի բացակայութիւնն է,

քանզի ես հաւատում եմ, որ բերկրանքի բացակայութիւնը նոյն ինքն Աստծու բացակայութիւնն է մեր կեանքում:

### **Աղօթքը մեր կեանքի հայելին է**

Աղօթքի կեանքում առանձնութեան մէջ լինելը նշանակում է Աստծուն հանդիպել եւ Նրան դարձնել մեր կեանքի հայելին: Մեր աղօթանուէր կեանքում հանդիպող լռութեան պահերը այն երեւոյթներն են, երբ մենք լսում ենք Աստծու ձայնը եւ այն արձագանգում մեր հոգիներում:

### **Մի՛ փնտռէք ձեր անձնական շահը**

Մբ. Պօղոս Առաքեալի Կորնթացիներին ուղղուած այս պատգամը (Ա. Կորնթ. 10:24) յստակօրէն արտայայտում է մարդկային բնութիւնը: Մեր «ես»-ի կործանիչ զօրութիւնից ապատագրուելու համար նախ պէտք է, որ մեր սրտերը յանձնենք Աստծուն: Որքան հաստատուն լինի Աստծու ներկայութիւնը մեր հոգիներում, այնքան աւելի մեր «ես»-ը պարտութեան կը մատնուի:

### **Արդարութիւնը յաղթում է**

Այսօրուայ հասարակութիւնը տառապում է արդարութեան բացակայութիւնից: Ի հակադրութիւն դրան, Աւետարանները մեզ յայտնում են, որ ճշմարտութիւնն ու արդարութիւնը ի վերջոյ յաղթանակելու են: Փալու է այն օրը, երբ արդարութիւն կը

տիրի: Այսօր, սակայն արդարութեան բացակայութեան պատճառով ատելութիւնն է տիրում ամբողջ աշխարհին եւ խոչընդոտում մարդկանց խաղաղութեանը: Ուրեմն քրիստոնէութեան հիմնական ուղին ու նպատակն է լինել արդարութեան հետեւորդներ եւ բոլորիս սրտերում արթնացնել մեղաւոր կեանքը մերժելու գիտակցութիւնը:

### **Ապատութեան արմատը Աւետարաններն են**

Արդի ժամանակներում ապատութիւն բառը կորցրել է իր իրական իմաստը: Մարդիկ շփոթում են ապատութիւնը անտութեան հետ: Ապատութիւնը մեզ թելադրում է բարձր մարդկային հաւատք, մինչդեռ անտութիւնը առաջնորդում է դէպի մարդկութեան կործանում: Եկէք ուրեմն զօրացնենք մեր մէջ քրիստոնէական կոչումը՝ հասկանալու համար ապատութեան ճշմարիտ իմաստը եւ հաստատելու մեր միութիւնը Աստծու հետ:

### **Ներողամտութիւնը ճշմարիտ առաքիւնութիւն է**

Մեր Տիրոջ Աւետարանը մեզ ներողամտութեան ոգի է ուսուցանում: Այն քրիստոնէան, ով ի վիճակի է իր հոգում արթնացնել ներողամտութեան ոգին, իրապէս երջանիկ անձ է, քանզի կարողացել է թօթափել իր խիղճը մթազնոդ ծանրութիւնները: Աւետարանները կարդալու ընթացքում մենք հանդիպում ենք մի մեծ պատ-

գամի, որը մեզ տրոււմ է անառակ որդու առակի միջոցով: Այն վերափոխում է մեր հոգիները եւ ոյժ տալիս մեզ մեր կեանքը հրաշքի վերափոխելու:

### **Մենք ունենք շնորհներ, որոնք տարբերում են**

Աստծու շնորհները կեանքի են կոչում մարդկանց միջով: Մարդ անհատը աստուածային շնորհների պարարտ հողն է հանդիսանում: Իսկ ինչպէ՛ս են որոշուում երկնային պարգեւները: Նրանք արտայայտուում են աղօթանուէր կեանքի միջոցով: Ուրեմն, Աստծու կամքը արտացոլուում է աստուածատուր պարգեւների օգնութեամբ: Դա է պատճառը, որ մենք բարոյական պարտաւորութիւն ունենք վերածուելու աստուածային կամքի իրական կրողների:

### **Սրբութեամբ զօրացրէ՛ք ձեր սրտերը**

Նրանք, ովքեր շարունակաբար եւ յարատեւօրէն աղօթում են, դէպի սրբութիւն են ուղղում իրենց կեանքը: Աղօթել նշանակում է նաեւ ապրել սրբակենցաղ կեանքով, քանզի սրբութիւնը արտայայտուում է աղօթանուէր կեանք վարող անձանց մօտ: Սրբութիւնը ժառանգուող մի հոգեվիճակ չէ, այլ գոհութեամբ ապրող կեանքի հետեւանք: Ճշմարիտ բերկրանքը արմատաւորուած է սրբութեան մէջ:

## **Աստուած աշխարհի խաղաղութիւնն է**

Խաղաղութեան խորհուրդը Աստծուց է սկզբնաւորում: Խաղաղութիւնը տիրում է աշխարհի այն բոլոր վայրերում, որտեղ մարդիկ ապրում են Աստծու հաւատքով: Մարդուն աստուածային իմաստութիւն է տրուած, որպէսզի իր բարի գործերը կարողանայ արտայայտել իր իսկ ստեղծագործական կեանքում:

## **Մեր քրիստոնէական հաւատքը աղունքն է բոլոր հրաշքների**

Եթէ մենք կորցրել ենք մեր հաւատքը, ապա կորցրել ենք նաեւ Աստծու ներկայութիւնը: Աստծու հանդէպ մեր տածած հաւատքը հանդիսանում է նոր կեանքի թթիւմորը: Եւ հաւատքի միջոցով է, որ մենք լիցքաւորում ենք մեր հոգիներն ու մտքերը Աստծու ներկայութեամբ:

## **Սիրոյ պատգամը արտայայտում է մեր անձերում**

Մերը լոկ գաղափարական մտորում կամ պատգամ չէ, քանզի այն պարզորոշ ընկալում է Քրիստոսի զոհաբերական կեանքում: Յիսուսի սէրը մարդկութեան հոգիների շարժիչն է: Նրանք ովքեր Քրիստոսով մկրտուել են, զօրացել են նաեւ Մբ. Յարութեան մեծ Խորհրդով: Մեր հոգեւոր կեանքի լուսաբացը սկսում է Յիսուսի Յարութեամբ:

## **Քրիստոս նոր ժամանակների Էմմաուսի ճանապարհին**

Այն հաւատացեալները, ովքեր լցուած են քրիստոնէական հաւատքով, անկասկած կարող են հանդիպել մեր Տէր Աստծուն: Նա սպասում է մեզ, որպէսզի երբ մտնանք Նրան պարտութեան մատնի մարդկային հոգիներում առկայ խաւարը եւ մեր սրտերում արմատաւորի նոր կեանքի յոյսը: Մեր Տէր Աստծու Աւետարանը մարդկութեան համար յոյսի պատգամ է՝ ուղղուած բոլորին:

Մտելով մեր հոգիները Աւետարանից բխող յոյսի պատգամներով՝ մենք կը քայլենք Աստծուն ընդառաջ:

## **Քրիստոսի դեսպանները**

Այս աշխարհում մենք բոլորս պարտաւորութիւն ունենք դառնալու մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի դեսպանները: Մեզ է վստահուած այս առաջադրանքը, ինչն ինքնին արդէն Աստծուց շնորհուած մեծ պատիւ է: Պիտի կարողանանք վարդարել մեր հոգիները արդար գործերով, իսկ ամենից առաւել՝ Աստծու խօսքի քարոզիչների վերածուելով: Անկասկած առաքեալները ջանասիրաբար կատարեցին այդ առաջադրանքը: Այսօր մենք էլ Աստծուց կանչուած ենք անդադար աղօթքների միջոցով ականջալուր լինելու Նրա ձայնին:

## **Չգեստաւորութեցէք սիրով (Կող. 3:14)**

Նրանք, ովքեր հետեւում են մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի այս պատգամին Աւետարանի ճշմարիտ պատգամաւորներն են համարում: Մենք այսօր էլ տեսնում ենք շատ մարդկանց, որոնց կեանքը հանդիսանում է աստուածային սիրոյ արտայայտութիւն: Այսպիսի անձանցից էր Մայր Թերեզան, ում կարելի է համարել մարդկութեան պատմութեան ամենից ոգեշնչող դէմքերից մէկը: Նրա կեանքը ոգեւորեց մեզ բոլորիս եւ համազօր է կոչուելու դարի հրաշքը: Իրականում նրա կեանքը մինչեւ օրս էլ շարունակում է մեզ ոգեւորել:

## **Յիշեցէք աղքատներին**

Բարեգործութիւնը քրիստոնէական կարեւորագոյն առաքիւնութիւններից է: Այն հանդիսանում է քրիստոնէական մեր կեանքի գործնական քայլերից մէկը: Կարիքաւորներին օժանդակելը ոչ միայն մեր, այլեւ Յիսուսի ամենից կարեւոր առաքիւնութիւններից էր:

Բարի գործեր կատարելով ու դիմացիներին օգնելու շնորհիւ՝ մենք իրապէս էլ կը հանդիպենք Յիսուսին:

**«Տոլորի հանդէպ բարիք գործելու հետամուտ եղէք» (Ա. ԹԵԱ. 5:15)**

Չոհարերութիւնը մարդկային յարաբերութեան հիմնասիւնն է, քանզի մեր փո-



խաղարձ ծառայութեամբ է, որ մարդկութեան հիմքերը զօրանում են: Յիրաւի, մենք մեր զոհաբերուող կեանքերը մրցակցութեան ասպարէզ պիտի դարձնենք եւ այդպէս կատարելով է, որ պիտի կարողանանք Աւետարանը դարձնել մեր հոգու իրական պարունակութիւնը: Չոհաբերութեան ամենավառ արտայայտութիւնը մարմնատրուած է մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի անձի մէջ, քանզի Նա երկնքից իջնելով՝ խոնարհեցրեց Իր Անձը եւ ծառայեց Իր աշակերտներին:

Յիսուսի մէջ ենք տեսնում Աստուծոյ փառքը:

### **Դուք էք աշխարհի լոյսը**

Մեր Տիրոջ այս պատգամը մարտահրաւէր է՝ ուղղուած մեզ բոլորիս, քանզի այն մեր մէջ արթնացնում է հոգու կարեւորագոյն զգացումներից մէկը. աստուածատուր մեր կեանքերն այնպէս ապրել, որ նրանք մարդկութեան համար վերածուեն լոյսի: Քրիստոնէաները բարոյական պարտատրութիւն ունեն իրենց պարզեւները կիսելու միսների հետ: Այդպէս կատարելով՝ նրանք կ'առաջնորդեն իրենց քայլերը դէպի Աստուած:

### **Յանձնառութիւն Աստուծուն**

Յանձնառութիւն: Այս մէկ բառի մէջ պարփակուած է մեզանից ակնկալուող գործնական կոչումը: Աղօթել՝ նշանակում է յանձնառութեան մէջ լինել: Յանձնառութիւնը

արտացոլում է նոր մղումով, երբ գտնում ենք մեր մտերիմների շրջապատում՝ լինի դա հաւատի գործերի կամ արուեստի վրայ հիմնուած յատուկ տօնակատարութիւններում: Այստեղ է որ առաւել ցայտուն կերպով տեսնում ենք Աստծու փառքը: Յանձնառութիւնը քրիստոնէական հաւատի ամենից վառ եւ իրական արտայայտութիւնն է:





